



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀՆԶ. ՅԵՂԱՓ. ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏ. Կ.-ԹԻՒՆ

Պրոֆեսարներ յոչոր երկրների՝ միացի՛ք

ՄԻԼԻՏԱՐԻԶՄԸ

ԵՒ

ԲԱՆԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Հրատ. «ԸՆԿԵՐ» Մասնագիտի

No. 7

Թարգմ. Ահրիման

ՌՈՒՍՉՈՒՔ

Տպարան «Վերածնունդի»-ի

1904

32(47)

Մ-68

39(47)

5-68

26 SEP 2006  
511.2 - 09

ՀԼԶ. ՅԵՂԱՓ. ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏ. Կ. - ԹԻԻՆ

Պրոլետարիներ թողր երկրների՝ ձխացե՛ք

# ՄԻԼԻՏԱՐԻԶՄԸ

ԵՒ

# ԲԱՆԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Հրատ. «ԸՆԿԵՐ» Մասնագիտի

No. 7

Թարգմ. Ա.հրիսևան

ՌՌԻՍՉՈՒԻ

Տպարան «Վերածնունդի»-ի

1904

28 JUN 2013

15088

Մ Ի Լ Ի Տ Ա Ր Ի Զ Մ Ը

Ե Ի

Բ Ա Ն Ի Ո Ր Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ Ը \*)

I

Մ Պ Ս Ռ Ա Ջ Ի Լ Ո Ւ Մ Ե Ե Ր Ի Զ Ա Ր Գ Ա Ց Ո Ւ Մ Ը, Մ Ի Լ Ի Տ Ա Ր Ի Զ Մ Ը Ր Ի Բ Ե Ռ Ը Ռ Ո Ւ Մ Ա Ս Ա Տ Ա Ն Ո Ւ Մ

Մ ի լի տարի զմ է կոչուում այն կարգը, որում ժողովրդի միջոցներն ու ոյժերը մաշուում են զօրք և նաւատօրմ պահելու համար:

Ամէնքին հասկանալի է, որ պատերազմը նախնական գազանութեան մնացորդն է, որը պահպանել է այն ժամանակներից, երբ մարդիկ անդիտակցաբար էին ապրում, երբ մարդը իւր գոյութեան կուտի համար, բացի ֆիզիքական բիրտ ոյժից, ուրիշ ոչ մէկ միջոց չունէր:

Մարդկութիւնն իւր զարգացման մէջ անգաղար առաջ է գնում և, թւում էր, թէ պատերազմը աստիճանաբար պէտք է ոչնչանար, ինչպէս ամէն մէկ կոպիտ նախնական բան, որպէս մարդկանց մասնաւոր կեանքում չբացաւ իւրաքանչիւր վիրաւորանքի համար սպա-

\*) Սոյն բրօշխուրի բնագիրը (ռուսերէն) հրատարակւած է 1903 թւին:



638-92

նութեամբ վրէժ լուծելու մի ժամանակ նւիրական սովորութիւնը, ինչպէս անհետացաւ մի ժամանակ աշխարհի երեսին ամէնուրէք թագաւորող ստրկութիւնը :

Եւրոպայի ժողովուրդները ահա 2 հազար տարի է, որ դաւանում են մէկ կրօն, որն ուսուցանում է, թէ բոլոր մարդիկ եղբայրներ են և դատապարտում են ամէն տեսակ բռնութիւն : Այն ինչ քրիստոնեայ ժողովուրդները ոչ միայն չ'օգնչացրին պատերազմները, այլ և սըրբազօրծեցին այն՝ իրենց եկեղեցու անունով և քահանաները Գրիստոսի անունով օրհնում են մարդկանց, որոնք գնում են «թշնամիներին» սպանելու :

Բոլոր քաղաքակրթւած ժողովուրդների մէջ մարդ սպանելը ամենամեծ յանցանք է համարւում և օրէնքով խիստ արգելւում է : Իսկ տասնեակ և հազարաւոր մարդկանց սպանելը, որը պատերազմ է կոչւում, ոչ միայն յանցաւոր և պարսաւելի չէ համարւում, այլ և մարդիկ պարծենում են այդ մասսայական սպանութիւններին մասնակցելով : Այդ սպանութիւնների մէջ եռանդի համար մարդկանց պարզեատրում են շքանշաններով ու աստիճաններով, իսկ նըրանք, որոնք կարողացել են իրենց կեանքում աւելի շատ մարդկանց ուղարկել այն աշխարհը, պարգևատրւում են արձաններով և «ազգային հերոսների» անուն են ստանում :

Մարդկութեան ոյժերը երբէք չեն զարգացել այնպիսի արտասովոր արագութեամբ,

որպիսին կատարւում է մեր աչքերի առաջ : Այժմեան մարդը, շնորհով գիտութեան և արգիւնաբերութեան զարգացման, կարող է հարկւր անգամ աւելի հարստութիւն արտադրել, քան կ'արտադրէր վայրենին : Սակայն, առաջւայ պէս, ժամանակակից մարդը իրեն ոյժի շատը վատնում է ոչ թէ հարստութիւնը մեծացնելու այլ այն կործանելու վրայ :

Հաշւած և ապացուցւած է, որ վերջին 50-60 տարւայ ընթացքում, երկրագնաի բոլոր գլխաւոր պետութիւններում զինւորական ոյժերի և զինւորական ծախսերի մեծութիւնն աճել է աւելի արագ, քան ժողովրդային հարստութեան մեծութիւնը : Դա նշանակում է, որ իւրաքանչիւր տասնամեակին ժողովրդական աշխատանքի աւելի և աւելի մեծ մասն է գործադրւում կործանման գործի վրայ : Թէ՛ պետական գործիչները և թէ՛ գիտութեան մարդիկ գալիս են մէկ եզրակացութեան, — ժողովրդային ոյժերը աւելի վատնւում են պատերազմի վրայ, անդադար սպառազինումները նոյնիսկ խաղաղ ժամանակ այնքան թանկ են նստում, որ սպառնում են ճնշել ժողովրդներին բոլոր տուրքերի և հարկերի ծանրութեամբ \*) :

\*) Ինչպէս որ մէկ ատանձին գործարանատէր չէ կարող նորանոր մեքենաներ չըմացնել իւր մրցակիցներին յետ չըմնալու համար, — այնպէս էլ ատանձին պետութիւն չէ կարող անդադար չըփոփոխել կործանման նոր գէնքերը, — նոր թնդանութիւնները, հրացաններն ու զինւորական նաւերը, — աւելի կատարելագործւածներով : Սպառազինութեան ունէ սիստէմ

ժամանակ առ ժամանակ երկու կամ մէկ քանի պետութեան մէջ պատերազմներ են բռնկուում և որքան աւելի առաջ է գնում ռազմագիտական արւեստն ու որքան աւելի է կատարելագործուում՝ դժբերի սպառաշինումը, — այնքան աւելի արիւնահեղ են այդ պատերազմներն ու այնքան աւելի թանկ է նստում պատերազմի իւրաքանչիւր օրը :

Միլիտարիզմը քայքայում է ժողովրդին և հասցնում է այնտեղը, որ այլևս վերցնելու բան չէ մնում : Բոլորից աւելի հեշտ Ռուսաստանը կարող է գալ այդ դրութեան, նա արդէն շատ է հեռու գնացել :

Ռուսաստանը, — համեմատած Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Միացեալ Նահանգների հետ, — շատ աղքատ երկիր է, սակայն նա աշխարհիս երեսին ամենամեծ զօրքն է պահում : Խաղաղ ժամանակ մեզանում պատրաստ կայ 950,000 հրացանաւոր, իսկ պատերազմի ժամանակ զօրքը երեք ու կէս միլիօնի է հասնում, և դրան դեռ պէտք է կցել ահագին զինւորական նաւատորմը, որի մեծ մասը շինւած է ամենավերջին տարիներս : Մեր զօր-

դեռ ամէնուրէք չըտարածուած, — մէկ էլ տեսար, որ մէկ նոր գիւտ գերազանցութիւն տւեց պետութեանը, որը առաջին անգամ ինքը տիրացաւ դրան : Սկսուում է նոր գիւտը իւրացնելու տեղային ձգտում եւ բանը նրանով է վերջանում, որ ամէն մէկ երկիր նոր տասնակ միլիօններ է փչացնում, իսկ «հին» զէնքերը՝ դեռ գործի մէջ չըմտած՝ գործածութիւնից դուրս են գալիս :

քը համարեա մէկ ու կէս անգամ մեծ է, քան Գերմանիայինը կամ Ֆրանսիայինը, երկու և կէս անգամ մեծ է քան Աւստրո-Վենգրիայինը, չորս անգամ աւելի, քան Անգլիայինը : Եւ իզուր չէ, որ Ռուսաստանը հռչակուում է իւր «խաղաղարար» — ցարերով : Ալէքսանդր III-ը ըստացաւ այդ կոչումը մեռնելուց յետոյ, իսկ Նիկօլայ II-ը — դեռ կենդանի ժամանակ \*) :

\*) Ինչպէս յայտնի է, 1898 թւի Օգոստոսին Նիկօլայ II-ը դիմեց բոլոր կառավարութիւններին՝ խաղաղութեան եւ զինաթափութեան հրաւիրելով, իսկ 1899 թւին նա Հաագայում, Հօլանդիայի մայրաքաղաքում, գումարեց «խաղաղութեան կօնֆէրենցիա», — պետութիւնների ներկայացուցիչները ժողով, — խորհրդակցելու համար խաղաղութիւնը ամրապնդելու մասին : Միլիօնաւոր մարդիկ եւ հազարաւոր լրագրեր Նիկօլայ II-ին դրա համար երկինք բարձրորին : Սակայն այդ կեղծ կօնֆէրենցիայից ոչինչ դուրս չեկաւ, եւ նոյնիսկ ռուս կառավարութիւնը՝ խաղաղութեան մասին այդ դատարկարանութեան աղմուկի մէջ՝ արագութեամբ ամրացրեց Չինաստանից խլած նաւահանդիսաները, — Պօլտ-Արտուրն ու Տալիէնովանը : Դրանից անմիջապէս յետոյ Նիկօլայ II-ը Ֆինլանդիայից պահանջեց, որ նա իւր զօրքը եօթ ու կէս հազարից բարձրացնէ մինչ 22 հազարը եւ դա ռուս զենքերաների լիակատար կարգադրութեան յանձնէ (առաջ ֆիննական զօրքը միայն ֆինլանդիայում էր ծառայում) : «Խաղաղութեան կօնֆէրենցիայից» մէկ տարի յետոյ, երբ Եւրոպացիների ձեռքով կողոպտւած դժբաղտ չինացիները սկսեցին իրենց «զահլան» տանող միասիօնէր-պօպերին ծեծել, — Եւրոպական պետութիւնները կպան այդ պատճառից, որպէսզի Չինաստանի հետ պատերազմ սկսեն եւ «մեծ» պետութիւնների միացեալ վռնակի գլխին կանգնած էր մեր «խաղաղարար-ցարը» ու Ռուսաստանը Չինական պատերազմից յետոյ, բոլորի համար անսպասելի կերպով, յափշտակեց Մանչուրիան ու այդ համեղ պատուը շատ

Հաշւենք թէ ինչ է նստում ուս ժողովը-  
 զին «խաղաղ» ժամանակը: Մուտքի և ելքի պե-  
 տական 1902 թւի Հաշւէցուցակում, ցամաքա-  
 յին զօրքի համար նշանակւած է 323 միլիօն,  
 նաւատօրմի համար 98 միլիօն, իսկ 3 միլիօն  
 ուսեւտի պաշարի և ֆուրաժի գների բար-

մեծ դժուարութեամբ վերադարձրեց Չինաստանին, երբ  
 Անգլիան ու Նապօնիան սկսեցին պատերազմ սպաս-  
 նալ Ռուսաստանի այդ զօրանալը իրենց համար ձե-  
 ուրնտու չընամարելով: Իսկ ներկայումս պատրաստ-  
 ւելով այն բանի համար, որ իւր ժողովրդի ուշադ-  
 րութիւնը նրա սեփական գործերի վրայից հեռացնէ  
 (այսինքն, որպէսզի նրա աշատութեան ձգտումի ա-  
 ոայն առնէ), — Ռուս կառավարութիւնը սկսում է  
 խօսք բացանել թիւրքիայի հետ պատերազմելու կա-  
 րելիութեան մասին: Հէնց այդ ոգով խօսեց կոմս  
 Իգնատևը, որին կառավարութիւնը ուղարկել էր  
 Ռուլլարիա՝ բուլղարների թիւրքական գերութիւնից  
 ազատելու 25-ամեակը տօնելու ժամանակ: Այդ ոգով  
 է խօսում նաև ինքը, «խաղաղաբարը» իւր բնակիւպ-  
 պատերի տակ տասնեակ հազարաւոր ուս զինւորներ  
 աւելն իրենց գլուխը: Այժմ ոչ ոք չէ կասկածում, որ  
 «խաղաղութեան կօնֆէրենցիայի» խաղը մէկ զգուշի  
 կատակներով թիւն էր: Իսկ դա խաղաց ուս կառա-  
 վարութիւնը որովհետև այն ժամանակ Ռուսաստ-  
 անին սպասում էր ընդհարում Անգլիայի հետ եւ բո-  
 լորը Չինաստանին նոյն այդ կողմակցելու պատճառով:  
 Սակայն Ռուսաստանը պատերազմի համար պատրաստ-  
 ւած չէր, իսկ անգլիական կառավարութիւնը չէր կա-  
 ձայնութեան: Եւ ահա ուս կառավարութիւնը ընդ-  
 հանուր խաղաղութեան մասին իւր խօսքերով ջանաց  
 ազդել անգլիացիների վրայ, որպէսզի անգլիական  
 կառավարութիւնը չըկարողանայ պատերազմ սկսել:  
 Իսկ երբ այդ խօսակցութիւններն այլևս անպէտք  
 դարձան, այն ժամանակ նրանց մասին ուղղակի մո-  
 ացան:

ձրացման դէպքի համար և դեռ 2 միլիօն էլ  
 պետական ձիերի գործարանի համար (դա ան-  
 հրաժեշտ է գլխաւորապէս հեծելազօրի համար):  
 Բոլորը՝ 426 միլիօն ռուբլի: Սակայն դրանք  
 դեռ բոլոր ծախսերը չեն, որոնք ստեղծում է  
 ազմականութիւնը: Պետական պարտքերի տու-  
 կոսների վճարելը 1902 թւում կազմում է 286 միլ-  
 ռուբլի, բայց գործին տեղեակ մարդկանց հաշ-  
 ւով, այդ պարտքերի երեք քառորդը վեր-  
 ցրած է զինուորական պէտքերի համար, հետե-  
 ւաբար, ելքի այդ յօդւածից 214 միլիօն պէտք  
 է կցել զօրքի վրայ ծախսածներին: Ընդամէնը  
 ստացում է 642 միլիօն ռուբլի, այն է, պե-  
 տական բոլոր ծախսերի 36 տոկոսը (ընդհանուր  
 գումարն է 1776 միլիօն ռուբլի): Իսկ ժողո-  
 վրդի շարժացման վրայ ծախսւած է տարեկան  
 ընդամէնը 36 միլիօն, այսինքն 18 անգամ քիչ:

Ռուսաստանում իւրաքանչիւր բնակչի վը-  
 րայ, այդպիսով, ընկնում է զինուորական գոր-  
 ծի ծախսերից 5 ռուբլի, իսկ 5 հօգուց բաղկա-  
 ցած ամէն մէկ ընտանիքի վրայ, — 25 ռուբ-  
 լի: Բայց այդպէս միջին հաշւով է դուրս գա-  
 լիս, իրապէս պետական այդ ծախսերը ազգա-  
 բնակչութեան միայն աղքատ մասի ուսերի վրայ  
 են ընկնում, ունեւոր դասակարգերը վայելում  
 են կառավարութիւնների հովանաւորութիւնը և  
 պետական հարկերի մէկ չնչին մասն են վճա-  
 րում, ուստի և աղքատներին բաժին է ընկնում  
 ոչ թէ 25 այլ աւելի շատ, — 30-35 ռուբլի տա-  
 րեկան մէկ ընտանիքի վրայ:

Բայց դրանով չէ սահմանափակում բեռը, որը միլիտարիզմը դնում է աղքատների ուսերի վրայ: Զինուորական ծառայութեան համար ամէն տարի մէկ քանի հազար հասակաւոր աշխատաւորներ կտրուում են արդիւնաւէտ աշխատանքից: Ամէն մարդ գիտէ թէ գիւղացու տնտեսութեանն ինչ փնաս է հասցնում իւր որդիներին մէկին զինուոր տալը: Երբեմն որդու զինուոր գնալը հանդիսանում է վերջնական հարւած, որը գիւղական ընտանիքին աղքատութեան մէջ է ձգում: Ազգաբնակչութեան ունեւոր դասակարգերի համար զինուորական պարտաւորութիւնն այդ նշանակութիւնը չունէ: Յանձին երիտասարդ նորակոչի՝ ունեւոր ընտանիքը աշխատաւորին չէ կորցնում: Մենք դեռ չենք խօսում, այն մասին, որ ունեւոր մարդիկ, հէնց իրենց հարստութեան շնորհով, հնարաւորութիւն ունեն ամէն կերպ խուսափել զինուորական իբր-ընդհանուր պարտաւորութիւնից, որը աւելի մեծ ծանրութեամբ ընկնում է աշխատաւոր դասակարգերի վրայ, — բանւորների և մանր-սեփականատէրերի վրայ:

II

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ինչո՞ւ պէտք է Ռուսաստանը միլիտարիզմը պահէ և տարեկան մինչ 650 միլիոն փրչացնէ: Սովորաբար այս պատասխանն են տալիս՝ որովհետև Գերմանիան ունէ 600,000 զինուոր, Աւստրիան՝ 400,000 և այլն, — չէ՞ որ Ռուսաստանն էլ պէտք է հնարաւորութիւն ունենայ արտաքին թշնամուց պաշտպանելու: Բայց եթէ նոյն կերպ էլ հարցնենք Գերմանիայի մասին, թէ նրա ինչին է պէտք 600,000 զինուոր, այն ժամանակ պատասխանը կը լինէ՝ որովհետև Ռուսաստանը 950,000 ունէ իսկ Յըրանսիան 620,000 և այլն: Այդ բոլորը իհարկէ ոչինչ չեն բացատրում: Չէ՞ որ պարզ է, որ եթէ մէկ երկիր իւր սպառազինութիւնը զօրեղացնում է, այն ժամանակ հէնց դրանով ստիպում է և միւս երկրներին սպառազինել: սակայն ի՞նչ բանի համար է նա այդ սարքում, եթէ նախապէս յայտնի է, որ միւս երկրներն էլ նոյնը պէտք է կրկնեն: Չէ՞ որ դա ամէնից առաջ հէնց իրեն համար ծանր կը լինի: Բացի այդ սրանից 50 տարի առաջ չըկար այսպիսի սպառազինումներ, ուր այժմ հարիւր

հազարաւոր զինուոր կայ, այնտեղ կար տասնեակ հազարաւոր :

Միլիտարիզմի վիթխարի զարգացման հիմնական, իսկական պատճառները հասկանալու համար, պէտք է յիշել թէ ժամանակակից հասարակութիւնը ինչպէս է կառուցւած և նրանում որ դասակարգն է տիրապետողը :

Ժամանակակից հասարակութեան մէջ թագաւորում է կապիտալը : Արդիւնաբերութիւնը կատարում է կապիտալիստական կերպով, այսինքն, նրան կազմակերպում և ղեկավարում է տիրապետողը կապիտալի, դրամական միջոցների, որոնք գործադրում են բանւորական ոյժ վարձելու վրայ : Արդիւնաբերութեան այդ կերպի նպատակը, — կապիտալիստի շահն է. շահի համար են ստեղծւում և շահի վրայ կենում ժամանակակից ձեռնարկութիւնները : Շահին ձրգտելու վրայ է կառուցւած ամբողջ կապիտալիստական հասարակութիւնը :

Շահը ուրիշի աշխատանքը շահագործելուց է ստացւում : Գործարանատէրն ու հողատէրը շահագործում են վարձու բանւորին, — գնելով նրա բանւորական ոյժն և դրա համար վճարելով միայն այնքան, որքան հարկաւոր է բանւորի և նրա ընտանիքի ապրուստը հոգալու համար : Գնող-կապիտալիստը, իր հերթին, շահագործում է գիւղացուն և արհեստաւորին՝ վճարելով նրանց աշխատանքի արդիւնքի համար իսկական արժէքից աւելի աման. Շահագործող դասակարգերի (պրօլետարիներ, մանր,

անկախ արդիւնաբերողներ) և շահագործող դասակարգերի (կապիտալիստներ, հողատէրեր) շահերը իրար ուղղակի հակառակ են. մէկը ձգտում է զօրեղացնել շահագործութիւնը, միւսը՝ նրան թուլացնել կամ նրանից ամբողջովին ազատել : Այստեղից առաջանում է դաւաճախագետի կռիւն : Շահագործող և կեղեքող դասակարգերը, կուսելով իրենց կեանքի բարօրութեան համար, պետութեան մէջ ձեռք են բերում այնպիսի իրաւունքներ, որոնք կարողանային իրենց օգնել՝ աւելի գիւրութեամբ պաշտպանելու իրենց շահերը. շահագործողներն ու կեղեքողները կուսւմ են շահագործութիւնն ու պետութեան մէջ իրենց գերիշխանութիւնը պահպանելու համար, այսինքն, պահպանելու համար այնպիսի օրէնքներ ու հիմնարկութիւններ, որոնք դժւարացնէին կուսը՝ շահագործութեան դէմ : Այդպիսով դասակարգերի կռիւը ընդունում է քաղաքական կուսի կերպարանք, կուս՝ տիրապետութեան և ազդեցութեան համար պետութեան մէջ :

Այդպէս, մենք տեսնում ենք, որ կապիտալիստները հարկադրւած են իրենց օգուտը պաշտպանել հարստահարող դասակարգերից : Բայց ոչ միայն նրանցից : Օգուտ ստանալու համար՝ կապիտալիստը ոչ միայն պէտք է խլէ արդիւնքը, նրան արտադրող վարձու բանւորների ձեռքից կամ շատ աման գնէ այն գիւղացիներից, արհեստաւորներից և տնայնագործներից, այլ և հարկաւոր է վաճառել այդ ար-

գիւնքը այնպիսի գնով, որը ձեռնտու լինի :  
 Դրա համար անհրաժեշտ են սպառողներ, այ-  
 սինքն, անհրաժեշտ է վաճառանոց : Վաճառա-  
 նոցու թագաւորում է մրցումը. կապիտալիստ-  
 ները իրար հետ կռոււմ են՝ ձգտելով վաճառա-  
 նոցի ըստ կարելոյն մեծ մասը ձեռք ձգել :  
 Որպէսզի աւելի աժան արտադրէ և դրանով  
 վաճառանոցից աւելի դիւրութեամբ դուրս նե-  
 տէ իրեն մրցակիցներին, իւրաքանչիւր կապի-  
 տալիսա ձգտում է ընդլայնել իւր արտադրու-  
 թիւնը (յայտնի է, թէ, որքան խոշոր է գոր-  
 ծարանը, այնքան աւելի աժան է նստում ա-  
 ռանձին արդիւնքի արտադրութիւնը) : Այս-  
 տեղից ստացում է արդիւնաբերութեան կա-  
 պիտալիստական կերպի անդադար ընդլայնում :  
 ապրանքների նորանոր կոյտեր լցում են վա-  
 ճառանոցները : Իսկ վաճառանոցը այնքան ա-  
 րագ չէ ընդարձակում. դրան խանգարում է  
 քայքայումը, որը կապիտալը մտցնում է մա-  
 նրը, անկախ արդիւնաբերողների շրջանը. նը-  
 րանք աղքատանում են գործարանների մրցու-  
 թեան պատճառով և չեն կարողանում իրենց  
 արդիւնքների պահանջը մեծացնել : Կապիտա-  
 լիստները վաճառանոցում աւելի և աւելի են  
 սեղմում. նրանք աւելի և աւելի դժւարու-  
 թեամբ են գտնում իրենց ապրանքների համար  
 վաճառք և ապահովում այն : Փոխադարձ մրցումը  
 աւելի և աւելի է սաստկանում ու աւելի և ա-  
 ւելի ահռելի դառնում համեմատաբար թոյլ  
 կապիտալիստների համար. ժամանակ առ ժա-

մանակ վրայ են հասնում սարսափելի ոկրի-  
 զիսներս, այնքան քիչ սպառողներ են գտնում  
 արտադրած ապրանքների անհաշիւ քանակու-  
 թեան համար, որ բոլոր ապրանքների գները  
 մէկ անգամից, ընկնում են. վրայ է հասնում  
 վաճառքի խափանումը, ոչ այնքան հարուստ  
 կապիտալիստները չեն կարողանում այլևս ի-  
 րենց պարտքերը վճարել ու շարունակել ար-  
 դիւնաբերութիւնը, քայքայելու երկիւղը բո-  
 նում է բոլոր մանր ու խոշոր ձեռնարկունե-  
 րին, աղատ գրամների տէրերը աւելի հեռու  
 տեղերում են դրանք պահում, չըլստահանա-  
 լով տոկոսներով տալ. կապիտալիստական ձեռ-  
 նարկութիւնները սապոնի բղբջակների նման  
 պատուում են, ամէնուրէք՝ արդիւնաբերու-  
 թեան կրճատում, մէկ մասի կամ նոյնիսկ բո-  
 լոր բանւորների հեռացում գործից : Մեքե-  
 նաները առանց գործածութեան կանգնում  
 են, նիւթերը անմշակ են մնում, բանւոր-  
 ները, խմբերով իրենց ծառայութիւններն են  
 առաջարկում, ապրանքների կոյտերը սպառող-  
 ներ չ'ունենալով, փտում են մթերանոցներում  
 — մէկ խօսքով, արդիւնաբերութիւնն առաջ  
 տանելու համար ամէն բան կայ, միայն թէ  
 շահ ստանալու հնարաւորութիւն չըկայ, ուստի  
 և ամէն բան դադար է առնում : Եւրոպան այ-  
 ժըմ այդպիսի կրիզիսի մէջ է : Արդիւնաբերա-  
 կան իւրաքանչիւր կրիզիս ցոյց է տալիս որ  
 արդիւնաբերութիւնը վաճառանոցից անցել է :  
 Եւ իւրաքանչիւր կրիզիսից յետոյ կապիտա-

լիստները աւելի եռանդով են ընկնում նոր վաճառանոցների յետեից: Բայց իւրաքանչիւր երկրի կապիտալիստների համար ամենայնուայն է նրանց սեփական երկիրը, նոյնպէս և վերջինիս կօլօնիան, — նաճած կամ առհասարակ դրա կառավարութեան իշխանութեանը հպատակ երկրները: Այդ վաճառանոցներից միշտ գիւրութեամբ կարելի է հեռացնել օտարերկրեայ մրցակիցներին կառավարութեան օժանդակութեամբ, որը կարող է դժարացնել կամ բոլորովին արգելել օտար ապրանքների ներմուծումը: Որքան աւելի ընդարձակ է պետութիւնը, այնքան աւելի նրա կապիտալիստները ապահովւած են վաճառանոցի կողմից: Ուստի իւրաքանչիւր երկրի կապիտալիստները միշտ պատրաստ են օտար երկրների նաճումներ ձեռք բերելու: Կապիտալիստների հէնց այդ դատակարգային շահերն են ժամանակակից պետութիւնների քաղաքականութիւնն առաջ մղողը: Բայց այժմ, երբ եւրոպական բոլոր պետութիւնները միակերպ լաւ զինւած են և պատրաստւած պատերազմի համար, — հարկ չըկայ մտածել եւրոպական մէկ ունէ պետութեան ձեռքով մէկ ուրիշին պատկանած հողի մէկ մասի խլիլու մասին: Դրա համար բոլոր կապիտալիստական պետութիւնները աւելի մեծ եռանդով են որոնում նաճումներ ծովի ալի կողմը, քիչ-քաղաքակրթւած ժողովուրդներով բնակեցւած երկրի մասերում, Այդտեղ առանց աշխա-

տանքի կարելի է ձեռք բերել հողի ահագին տարածութիւններ և միլիոնաւոր բնակիչներ. և այդ կօլօնիալներն առաւելութեամբ երեւան է գալիս այն, որ նրանցում կապիտալիստական արդիւնաբերութիւն կամ բոլորովին գոյութիւն չունէ, կամ թոյլ կերպով է զարգացած և նաճող-կապիտալիստները կարողանում են յուսալ առանց աշխատանքի հեղեղել իրենց ապրանքներով նաճած վաճառանոցը: Եթէ անկարելի է ուղղակի կերպով նաճել ասիական կամ աֆրիկական ունէ երկիր, այն ժամանակ նրան հնարաւորութեամբ տակ են առնում: Այդ խօսքը նշանակում է «պաշտպանութիւն», որը գործնականում հաւատարմութեամբ է եւրոպական կառավարութեան լիակատար տիրութեանը՝ «հովանաւորւած» երկրում. հպատակ իշխանութիւնների կողքին բանում են եւրոպականները, որոնք իրենց ազդեցութեանն են ենթարկում ամբողջ երկիրը, մինչև որ կարելի լինի մէկ ունէ առիթով զրկել նրան անկախութեան վերջին նշոյլից:

Եւրոպական պետութիւնների զրահաւորները, որոնք ժողովուրդների վրայ միլիոնաւոր բուրքիներ են նստում, մտնում են հեռաւոր ջրերի երեսին, առիթ որոնելով «հովանաւորւած» կամ «բարեկամ» փոքրիկ ժողովուրդին յայտարարելու, որ մեծ պետութեան «պատիւը» մէկ ունէ բանով վիրաւորւած է և այդ վիրաւորանքի փոխարէն պահանջելու վաշխառուա-

638-92



կան վարձատրութիւն։ Տեսնում ես, այստեղ  
 ոմեծ պետութեանս ծագում ունեցող մէկ ուէ  
 վաճառականի խարդախութեան համար բանտ  
 են նստացնում, երևան է գալիս ոմեծ պետու-  
 թեանս զրահաւորը և քաղաքը անմիջապէս ումբա-  
 կոծելու սպառնալիքի տակ պահանջում է ոչ  
 միայն խարդախին ազատել, այլև որ կառա-  
 վարութիւնը, որը համարձակել է իրեն ուվի-  
 րաւորելս, ոմեծ պետութեանս վաճառականին  
 նոր արտօնաթիւններ տայ\*)։ Այնտեղ, ծովի  
 այն կողմի երկրի դժբաղտ ազգաբնակութիւնը,  
 օտարերկրացիների անգութ հարստահարութիւ-  
 նից յուզւած, որոնց դէմ հպատակ կառավա-  
 րութիւնը ոչինչ չէ կարողանում անել, — մէկ  
 անգամից օտի է կանգնում թէ՛ օտարերկրա-  
 ցիները և թէ իւր սեփական կառավարութեան  
 դէմ. այդ խառնակութիւնների ժամանակ զօռ-  
 բայ-վաճառականի և շօռբայ-միսիօնների ամէն  
 մէկ վնասի փոխարէն ոմեծ պետութիւնները  
 վարձատրութիւն են պահանջում՝ յանցաւորնե-  
 րին մահուան պատժի ենթարկելով և՛ գրամա-  
 կան հսկայական գումարներով և՛ իւր արդիւ-  
 նաբերողների ու վաճառականների համար նոր  
 արտօնութիւններով և՛, վերջապէս, ուղղակի  
 հողով (Չինական պատերազմը)։ Երրորդ դէպ-  
 քում, կապիտալիստական պետութիւնը ազքատ,  
 անքաղաքակիրթ երկիրը ցանցում է իւր կա-

\*) Այդ տեսակ պատճառ մօտերս հնարեց Գերմա-  
 նիան Հախի (Ամերիկայում) հանրապետութեան վրայ  
 արչաւանք դործելու համար։

պիտալիստական ամէն տեսակ ձեռնարկութիւն-  
 ներով (գլխաւորապէս երկաթուղիներով), նաև  
 օգտւելով նրանից, որ այդ երկիրը իւր պարտ-  
 քերը չէ կարողանում վճարել, որպէսզի իւր դէմ  
 պատերազմ սկսէ, որը անպայման վերջանում  
 է նոր կողոպուտով (Գերմանիայի և Անգլիայի  
 այժմեան արչաւանքը Հարաւային Ամերիկայի  
 փոքրիկ հանրապետութեան վրայ)։

Կար ժամանակ, երբ հասարակութեան,  
 այսպէս անւանւած, որբոճր դասակարգերը  
 ապրում էին բացարձակ աւազակութեամբ, յար-  
 ձակելով խաղաղ աշխատաւորները, — երկրա-  
 գործների և արհեստաւորների, — վրայ՝ նրանց  
 վզին հարկ դնելով։ Այն ժամանակները աւա-  
 զակութիւնը հարուստ մարդկանց փառաւոր ապ-  
 րուստի գլխաւոր միջոցն էր։ Ժամանակակից  
 բարձր դասակարգերը, — կապիտալիստներն ու  
 կալւածատէրերը, — իրենց հայրենիքում ապ-  
 րում են «պատու», աշխատանքի շահագոր-  
 ծութեամբ, իրենց օգուտը դուրս են բերում  
 ոչ թէ բացարձակ բռնութեամբ, այլ սովի ոյ-  
 ժով, ոմեծում են ոչ թէ փայտով այլ բուբլով»։  
 Բայց իրենց երկրի սահմաններից դուրս, օտար-  
 երկրացիների վերաբերմամբ, և յատկապէս  
 «անքաղաքակիրթ», այսինքն ոչ-կապիտալիս-  
 տական երկրների վերաբերմամբ, մեր բարձր  
 դասակարգերը ուղղակի ամբողջովին յենում  
 են դրամ գուրս քաշելու հին, որբոճկիրթ և ևի  
 վրայ, — զինւորական աւազակութեան վրայ,  
 Բայց հեռաւոր, անքաղաքակիրթ երկր-

ները իրենց հպատակեցնելու իւր ձգտման մէջ, իւրաքանչիւր կապիտալիստական պետութիւն հանդիպում է միւսների հակադրութեանէն թեւեւ նը. իւրաքանչիւրն ուշադրութեամբ դիտում է, որ միւսը մէկ Զինաստանի տիրապետութիւնից մէկ համեզ պատառ չըխլէ։ Սկսելով կողոպուտի արշաւանք մէկ աֆրիկական կամ ամերիկական փոքրիկ ժողովրդի գէմ, եւրոպական պետութիւնը գիտէ, որ իրեն միշտ պատերազմ է սպառնում նախանձոտ հակառակորդի հետ։ Այն թէ ինչու ժամակակից ուրիշ կողոպուտի և բռնութեան քաղաքականութիւնը, — անամօթ լոնիական քաղաքականութիւնը, — անամօթ կողոպուտի և բռնութեան քաղաքականութիւնը, — կարողանում են առաջ տանել միայն ոյժեղ պետութիւնները, որոնք իրենց տրամադրութեան տակ ունեն հսկայական զօրք և ընդարձակ նաւատորմ, ահա թէ ինչու կօլօնիաներ նւաճելու մրցումը պետութիւնների մէջ՝ նշանակում է հասկերոպական պատերազմի մշտական վստակ։

Այդպիսով, միլիտարիզմի զարգացումը բացատրում է կապիտալիզմի զարգացումով, ժամանակակից բարձր դասակարգերի՝ կապիտալիստների՝ ոյժի և զօրութեան զարգացումով, կապիտալիստական հարստահարութեան շրջանի ընդլայնման ձգտումով։ Իսկ դրա կողքին միլիտարիզմը պաշտպանում է կապիտալիստների ձգտումը, — ամրապնդել արդէն գոյութիւն ունեցող հարստահարութիւնը, դժարացնել կոնիւր նրա գէմ։

Հարկաւոր է նւաճած երկրները իրեն տիրապետութեան տակ պահել, նւաճած ժողովրդներին թոյլ չըտալ շարժելու։ Ռուս պետութիւնը, որպէսզի իւր իշխանութեան տակ պահէ Ահաստանը, հարկադրած է հարիւր հազարաւոր զինուորներ պահել հրացանները ձեռքերին։ Որքան որ ուս կառավարութիւնը նոր արշաւանքներ է գործում Ֆինլանդիայի վրայ և աւելի է նրան ստրկացնում, մտցնելով այնտեղ համառուսական կարգեր, այնքան աւելի անհրաժեշտ է հանդիսանում զինուորական ոյժերը պատրաստ պահել, որպէսզի թնդանօթներով ու ուիններով իւր իշխանութեան տակ պահէ ֆինն ժողովուրդը, եթէ նա ուզենայ ապստամբել իրեն աղատութիւնների պաշտպանութեան համար։

Իսկ միւս կողմից, զինուորական ոյժը հարկաւոր է և՛ սեփական ժողովրդի համար, — իներքին թշնամիների համար։ Զինուորական ոյժը հարկաւոր է մեր հասարակութեան մէջ տիրապետող կապիտալիստներին, որպէս գործիք իրենց դասակարգային կոնիւր քսկրներին, — հարստահարութիւնը սաստկացնելու կամ պահպանելու համար։

Դասակարգերի բաժանւած հասարակութեան մէջ, գորքը միշտ գործիք է եղել ճնշելու ստորին դասակարգերի յուզումը՝ ընդդէմ կեղեքման ու հարստահարութեան, — բարձր դասակարգերի կողմից։ Հին ժամանակ զօրքը ճնշում էր ստրուկների ապստամբութիւնը, ճոր-

տատիրութեան ժամանակ նա ժողովրդին պահում էր հպատակութեան մէջ՝ աղնականներին: Բայց նախկին ժամանակները զօրքը երբէք այնպէս յաճախ չէ հարկադրած եղել ուղղակի պարձու մարդասպանի դերում դուրս գալ ունեւորների մօտ ծառայելու մէջ՝ նրանց կուում ընդդէմ պակաս ունեւորների և չունեւորների: Որովհետև չունեւորների կռիւը ընդդէմ ունեւորների երբէք այնպէս ահագին չափ չէ ընդունել ինչպէս մեր օրերում, երբ այդ կռիւը առաջ է տանում աւելի աճող և աւելի զօրացող պրոլետարիատը:

Ժամանակակից հասարակութեան մէջ տիրապետող դասակարգը, բուրժուազիան (կապիտալիստների դասակարգը), պահպանում է իւր տիրապետութիւնն այն ամէն միջոցներով, որոնք ունէ պետական իշխանութիւնը՝ կապած նրա հետ ընդհանուր շահերով: Այնտեղ ուր բանւորների դէմ կուի մէջ բաւական չէ դրամի ոյժը, սովի ոյժը, կապիտալիստները բունում են ոյժից օրէնքների, որոնք հրատարակւած են նրանց սեփական շահերի տեսակէտով. ուր չէ օգնում օրէնքի ոյժը, այնտեղ դիմում են ախնների և թնդանօթների ոյժին:

Բանւորների ամէն մէկ քիչ-չատ նշանաւոր գործադուլի ժամանակ, գործադուլի վայրն է ուղարկում գինւորակոն ոյժը, որ կարգը պահպանելու համար: Զօրքի հէնց միայն ներկայութիւնը՝ եթէ նրանք նոյնիսկ զէնք էլ չըզօր-

ծածին՝ բանւորների վրայ սարսափի ազդեցութիւն է թողնում ու քաջալերում կապիտալիստներին: Այդպիսով զօրքի հէնց միմիայն ներկայութիւնը գործարանատէրերին դնում բարեյակող դրութեան մէջ՝ նրանց տնտեսակա կուում բանւորների դէմ:

Ռուս կապիտալիստները շատ լաւ են հասկանում այդ և դրամ չեն խնայում զօրքը պահելու վճարի համար, որը ուղարկում է գործադուլի վայրը: Գործարանատէրերը ծախսեր մէկ մասը վերցնում են իրենց վրայ անմիջական կերպով, մէկ մասը վճարում են քաղաքային դումաները, որոնք ամբողջովին խոշոր կապիտալիստների ձեռքում են գտնուում: Իր գայում, 1899 թւի մայիսեան խառնակութիւններից յետոյ, բիզայի վաճառականները խնդրեցին քաղաքում զինուորական նոր ոյժեր բնակեցնել (գլխաւորապէս կօշակներ): Երբ անցեալ տարի մայիսի 1-ից անմիջապէս յետոյ Վիլնայի դումայում մէկ քանի ձայնաւորներ բողոքեցին կօշակների զօրախումբի կառավարչի դրամ ստանալու համար ներկայացրած միանգամայն խոշոր հաշիւների դէմ, այն ժամանակ մեծամասնութիւնն ուշադրութիւն չըդարձրեց այդ բողոքների վրայ, համաձայնելով մէկ ձայնաւորի հետ, որը ցոյց տուեց, թէ ինչ որ տակարար ազդեցութիւն թողեց կօշակների ներկայութիւնը աշխատաւոր բնակչութեանը կարգի մէջ պահելու վրայ: Հարաւորապէս հանքարդիւնաբերողները իրենց ժողովն բում

հարց են բարձրացնում հարաւային ամբողջ լեռնային շրջանում կողակների զօրացրած գնտեր բնակեցնելու մասին :

Արգա՛րե, զօրքի ներկայութիւնը բանւորների տնտեսական ընդհարումների ժամանակ կապիտալիստների հետ, ոչ միայն կարգը պահպանելը չէ ապահովում, այլև ընդհակառակը, կարգը խանդարելու գլխաւոր պատճառն է դառնում : Գործադուլները Ռուսաստանում աւելի հանդարտ են դառնում, աւելի սակաւ են պատահում՝ գէպքեր, որ գործաթողները յարձակւեն կոտորատելու մեքենաներն կամ ոչնչացնելու իրենց թշնամիների գոյքը : Բանւորներն իրենց գիտակցութեան աճման հետ էլ իրենք սովորում են հոգ տանել յարգը պահպանելու մասին, որպէսզի կառավարութեանը միջամտելու առիթ չըտան : Բայց որովհետև կապիտալիստներին ու կառավարութեանը ձեռնտու է այդ կարգը խանդարելը, որը ժողովրդի աչքում կարող է արդարացնել բանւորների վրայ կատարած արնալից արարմունքը — ուստի զօրքըն ու ոստիկանութիւնը երբեմն իրենք են առաջացնում խառնակութիւններ՝ յանկարծակի յարձակւելով խաղաղ ամբօխի վրայ կամ առանց ունէ պատճառի ձերբակալելով, այսպէս անւանւած, Պրոպագանդներին : Զինւորների ուսուցանւորներին շարքելու դեռ ոչ մէկ գէպք չէ եղել որ ընդհարումը իրենք բանւորները առաջացնէին : Սպանութիւնների պատճառը եղել է

միշտ ոստիկանական և զինւորական իշխանութիւնների յանդուրձութիւնը :

Ռուսական միլիտանտ զօրքը, որը վերջին 25 տարւայ ընթացքում միայն մէկ անգամ է իւր ոյժերը փորձել հարտաքին՝ թշնամու վրայ (1900-ին Չինացիների վրայ), այդ ժամանակում շատ անգամ է փորձել իւր նոր գէնքը հներքին՝ թշնամիների վրայ, — ուսուցանւորների վրայ, որոնք կապիտալիստների գէմ կուրի են դուրս եկել : Եւ այդ փորձը գըլխաւորաբար յաճախ կատարում է ներկայ ցարի, — Նիկոլայ II-ի, — թագաւորութեան օրով :

Դեռ նրա գահը նստելու օրից կէս տարի չանցած Փանագօրիական գնդի զինւորները Եւրօսլաւում կօրզինկինի մանուֆակտուրային գործարանի գործաթողների վրայ կրակեցին և Նիկոլայ II-ը Պարձրագոյն շնորհակալութիւն յայտնեց Պանագօրիայի քաջերին՝ որպէսզի բանեցնելու համար : Դրանից դեռ 2 տարի չանցած զօրքը շարք արեց Սերպուլսովի կօնչինի մանուֆակտուրային գործարանի բանւորների մէջ : որոնք 1897 թ.ի Յունվարին մեծ գործադուլ էին սարքել : Գործադուլի ժամանակ տեղի ունեցան մէկ քանի խառնակութիւններ, դրանցից յետոյ եկած զօրքը ուղղակի ներս խուժեց բանւորների հանրակացարանները և այնտեղ անդէն բարւորներին գանակոծեց : Անցաւ մէկ քանի ամիս և Գօմբրովի (Լեհաստանում) ամխափոր-գործաթողները, որոնք պահանջում էին ընկերութեան ապօրինի

կերպով վերցրած գրամները՝ «խաղաղեցեցին» արագաձիգ հրացանների գնտակների տարափով : Մէկ տարուց միքիշ յետոյ, 1898 թւի գեկտեմբերին, Շլիսէլբուրգից Պետերբուրգ տանող ճանապարհի վրայ, զինւորական ուժի աջակցութեամբ, իշխանութիւնները իրակա նացրին իրենց մտադրութիւնը, — ձերբակալելով Պալ'ի և Մասկէյ'ի գործարանների գործադուլի ղեկավարներին, որոնց բանւորները չէին ուզում տալ : Բանւորները յետ մղեցին ոստիկանութեան յարձակումը և օգնութեան ուղարկած զինւորական զօրագնդի կողմից վայրենի կոտորածի ենթարկեցին : Մէկ քանի ամսից յետոյ զինւորների բաց թողին Բիգայի բանւորներին վրայ, — 1899 թւին մասիսեան տօնը կատարելու ժամանակ, երբ ղեկացիները ընդհանուր գործադուլ էին սարքել, պաշտպանելու համար բանւորւհիներին, որոնց վիրաւորանք էին հասցրել ոստիկանական բաշխօղակները : Բիգայում բանւորների վրայ մէկ քանի օր շարունակ կրակում էին : Իսկ մէկ քանի ամսից յետոյ կրակելը եղաւ կառավարութեան պատասխանը Մարիուպօլի գործարանային բանւորների պահանջին, — աղատել ապօրինաբար ձերբակալած գործաթող-ընկերներին : Չենք թւում գործադուլների և բանւորի բողոքի այլ արտայայտութիւնների ժամանակ բանւորներին սիներով, կօշակների մտրակներով և հրացանների կոթերով ջարդելու բուրբ գէպքերը : Վերջին տարիներս բանւորները

ոչ մէկ նշանաւոր գործադուլ չէ եղել, ուր ոստիկանութիւնը, զինւորական ոյժի տակ պահւելով, ուէ անկարգութիւն չ'առաջացնէր՝ բանւորներին կապիտալիստներին հպատակել ստիպելու նպատակով : Զինւորների գործադուլի վայրում միայն ներկայ լինելը, որոնք պատրաստ են առաջին հէնց հրամանին կրակելու, ստիպում է բանւորներին տանել ոստիկանութեան այդ անկարգութիւնները : Իսկ ժամանակ առ ժամանակ, երբ սովորական միջոցներով չէր աջողում զսպել բանւորներին, բանն այնտեղ էր հասնում, որ գործաթողների խաղաղ ամբողի վրայ հրացան էր արձակում : 1901 թւի Մայիսին, Օբուխօվի գործարանում, Շլիսէլբուրգի ճանապարհին կրակեցին բանւորների վրայ, իսկ մէկ քանի օր դրանից առաջ, Վիբօրգի կողմում, նրանց կոտորեցին սառն զէնքով : 1902 թւի Մարտ ամսում, Բատումում sսսսն եւ երեք բանւոր սպանեցին, նոյեմբերի 11-ին՝ վեց հոգի Բօստօվում Դօնի վրայ և 17-ին՝ մէկ քանի տասնեակ մարդ Տիխօրէցկայա կայարանում :

Սակայն ժամանակակից ուսս պետութիւնը զբաղւած է ո՛չ միայն հապիտալիստների տիրապետութիւնը՝ վարձու բանւորների վրայ՝ պահպանելով, այլ և աշխատանքի հողատէրերի տիրապետութիւնը՝ ուսս գիւղացիների վրայ : Վաճառական-գործարանատէրի կողքին, որպէս գահի և «հայրենիքի» «յենարան» կանգնած է բարեկիրթ սերունդն այն «խնամակալների» ,

որոնք սրանից միայն 40 տարի առաջ դադարեցին ամառողական շնորհի հետ փոխելուց և դեռ չեն կարողացել մոռանալ ճորտատիրական կարգերի բոլոր սքանչելիքները: Աստիճանաբար յետ մղած բուրժուաշխայի կողմից, կապիտալիստ դասակարգի կողմից, ազնւական-կալաժատէրերի դասը պինդ կպած է իր, որպէս հառաջնակարգ դասի, իրաւունքներից: Ռուս պետութիւնը, ժողովուրդներից հաւաքած հարկերից զանազան միլիոնաւոր ուղորմութիւններով, արհեստական կերպով պաշտպանելով ազնւական դասին, միևնոյն ժամանակ նրան անմիջական իշխանութիւն տւեց գիւղացու անձի վրայ (զեմստովոների կառավարիչները, նըշանակւած տեղական ազնւականների միջից, հանդիսանում են լիակատար իշխանութիւն ունեցող աղաներ՝ գիւղացիների վերաբերմամբ): Ռուս պետութիւնը 1861 թւին մտցրեց այսպէս անւանւած «գիւղացիների ազատութիւնը» այն կերպ, որ յափշտակեց գիւղացիներից միլիոնաւոր դեսեատին հողեր՝ յօգուտ կալաժատէրերի և, «ազատութեան» գործը հէնց ձգելով ազնւականներից ընտրւած ազնւականների կօմիտէտի և հաշտարար միջնորդների ձեռքը, — ազնւականներին հնարաւորութիւն տւեց գիւղացիներին կողոպտելու դեռ սեփական միջոցներով, հողերը չափելու ժամանակ, որինաց թղթերը՝ մտցնելու ժամանակ և այլն, և նոյն ռուս պետութիւնը ներկայումս իւր իշխանութեան ոյժով ճնշում է գիւղացիների փորձերը՝

օրինական (գատարանով) միջոցներով հասնել հողի վրայ իրենց իրաւունքների վերականգմանը, որոնք խախտւած էին 1861 թւին: Տեղական ազնւականներին շնորհելով իշխանութիւն գիւղացու անձի վրայ, առանց գատարանի (վարչական միջոցներով) վճռելով ընդհարումներն գիւղացիների և ազնւականների միջև, բռնութեամբ պահելով (կալաժատէրերի օգտի համար) գիւղացիներին այն տեղերում, ուր նրանց ուտելու բան չըկայ, — այդ բոլորով ժամանակակից ռուս պետութիւնը գիւղացու և կալաժատէրի միջև յարաբերութեանը սուր կերպարանք է տալիս: Զրկւած հնարաւորութիւնից օրինական ճանապարհներով կուրելու իրենց հարստահարող և կեղիքող ազնւականների դէմ, գիւղացիները ստիպւած են գործել ինքնակամ իրենց միջոցներով և, — կարիքը ստիպում է, — վերականգնում են իրենց իրաւունքները, այնպիսի միջոցներով, ինչպիսիք են կալաժատիրական արտերի վարելը, (այսինքն, այն արտերի, որոնք կալաժատէրերի վրայ են գրւած, բայց գիւղացիների կարծիքով, պատկանում է նրանց), կամ հրդեհելով «տնտեսական» շինութիւնները կամ հացը, կամ ուղղակի յարձակելով կալաժատիրական ազարակների վրայ, որպիսին պատահեց անցեալ տարի: Ռուսական գիւղում, — շնորհով կառավարութեան քաղաքանութեան, որը անխղճօրէն պաշտպանում է ամէն մէկ ապօրինութիւն գիւղացիների վերաբերմամբ, —

միշտ ներքին պատերազմ կայ ազնւականի և գարակի և գիւղացու աւանի միջև . եւ այդ պատերազմում պետութիւնն ազնւականներին ծառայելու է հանում իւր զօրքը, ինչպէս որ նա այդ գնում է գործարանատէրերի տրամադրութեան տակ՝ նրանց կուում բանւորների դէմ :

Ժամանակ առ ժամանակ գիւղում էլ ուղղափառ զինւորականութիւնը՝ անդէն, քաղցած մարդկանց գնտակահարումներ է կատարում : Այսպէս, Ապրիլի սկզբում (1903) Պոլտաւայի մօտ, Կովալեովկա գիւղում գնտակահարեցին գիւղացիներին . Բայց, ամէնից շատ այդ կոււի մէջ գիւղացիների հետ, զօրքը դահիճի գեր է կատարում, — զինւորները դանակոծում են «խռով սրարներին» կամ պահպանում են ուստիկաններին, որոնք շրջապատում են այդ գործով : Գիւար է ասել, թէ ինչն է աւելի անբարոյականացնող կերպով ազդում զինւորների վրայ, քան իշխանութիւնների հրամանով կրակելը անպաշտպան ամբոխի վրայ, յաճախ ծերերի, կանանց և երեխաների վրայ, կամ սառնարիւն գանակոծելը (երբեմն մինչև մեռնելը)՝ արդէն խախտեցրած ու կապկապած մարդկանց : Մէկ բան կարելի է ասել՝ այդ շփոթանցներով, զինւորները գազանանում են մինչ այն աստիճան, որ յետոյ, առանց հրամանի վերելից, կատարում են իրենց համար կողոպուտ գիւղացիների ցնցոտիների և գիւղացիների կանանց բռնաբարումն : Այդպէս եղաւ

Խարկովի նահանգում 1902 թւի գարնանը, երբ նահանգապետ իշխան Օբօլէնսկին հրով ու սրով ամայացրեց ապստամբած գիւղացիների գիւղերը : Գիւղացիներին դատելիս, զինւորների բռնութիւնների մասին բաց է ի բաց յայտարարեցին փաստաբանները, բսղոբող այդ լըրբութիւնների դէմ :

Զօրքը դեռ մէկ ծառայութիւն էլ է մատուցանում ռուս կալւածատէրերին : Երբ աշխատող ձեռքերի գինը, շնորհով հունձի առատութեան, խիստ բարձրանում է, զինւորական հրամանատարները «իրենց» զինւորներին «արձակում» են աշխատելու իրենց շահի համար և դրանով նպաստում գների իջնելուն՝ մինչ կալւածատէրերին նպաստաւոր չափը : Երբեմն նոյնը լինում է գիւղական բանւորների գործադուլների ժամանակ :

Ռուսաստանում, սակայն, «պետական կարգ»՝ նշանակում է ո՛չ միայն ազնւականների և կապիտալիստական հարստահարութեան, այլև կառավարական իշխանութեան սիրապետքիւն ազգաբնակչութեան բոլոր դասակարգերի վրայ : Ազատ երկրներում, սր ժողովուրդը յեղափոխութեան օգնութեամբ իրեն համար նաճել է փաղափարակ իրարմէներ, կառավարական իշխանութիւնը պատասխանատու է ժողովրդի ներկայացուցիչների առաջ և եթէ այնտեղ էլ կառավարութեան քաղաքականութիւնը ծառայում է կապիտալիստների շահերին, այդ միայն այն չափով, ինչ չափով ժողովրդական

մասսաները դեռ իրենց շահերի կատարեալը  
 գիտակցութեանը չեն հասել և իրենց շահերի  
 ներկայացուցչութիւնը յանձնում են (պառլամեն-  
 տի պատգամաւորներ ընտրելով) իրենց թշնա-  
 միներին, — կապիտալիստական հարստահարու-  
 թեան կողմնակիցներին : Ռուսաստանում կա-  
 ռավարական իշխանութիւնը միւսպէտակաւ է .  
 չինովնիկների (բիւրօկրատիա) ամբողջ վիթխարի  
 մասսան, ծանրացած ռուս ժողովրդի վրայ, իւր  
 գործողութիւնների համար միայն իրեն է պա-  
 տասխանատու, իւրաքանչիւր չինովնիկ պատաս-  
 խանատու է միայն իւր իշխանութեան առաջ,  
 իսկ այդ չինովնիկական սաղնդուխքի բարձրու-  
 թեան վրայ կանգնած է ցարը, որը ինքնակամ  
 կերպով իշխում է Ռուսաստանի վրայ ըստ կա-  
 ըրողութեան ծառայելով աշնականների և կա-  
 պիտալիստների ճնշեալական շահերին . պաշտ-  
 պանելով նրանց հարստահարութիւնը, միապե-  
 տական կառավարութիւնը եռանդով պահպա-  
 նում է իւր համիշխանութիւնը երկրի վրայ և  
 հրաժարում է ազգաբնակչութեան ունէ մասին  
 տալ վերահսկողութիւն իւր կառավարելու վրայ :  
 Բայց որքան շատ է տարածուում Ռուսաստա-  
 նում լուսաւորութիւնը, ազգաբնակչութեան ա-  
 ռանձին դասակարգերը որքան աւելի են ձրգ-  
 տում ինքնագործութեան միջոցով պաշտպանել  
 իրենց շահերը, որքան աւելի նրանց համար  
 երևան են դալիս դէպքեր համոզելու չինով-  
 նիկների կառավարող խմբի անկարողութեան,  
 անընդունակութեան և շահասիրութեան մէջ, —

այնքան աւելի է տարածուում ազգաբնակչու-  
 թեան մէջ դժգոհութեան զգացումը ժամանա-  
 կակից պետական կարգից, այնքան աւելի հրա-  
 մայական է դառնում քաղաքական ազատութեան  
 պահանջը : Հարստահարող դասակարգերը ձրգ-  
 տում են ազատութեան, որպէսզի, նրանից օգ-  
 տուելով, հեշտութեամբ կուեն հարստահարու-  
 թեան դէմ, աւելի թափանցողները հէնց հա-  
 րստահարիչների . — բուրժուազիայի — միջինը՝  
 ձգտում են քաղաքական ազատութեան, որովհե-  
 տե գլխի ընկան, որ միապետութիւնը իրենց վրայ  
 էլ շատ թանկ է նստում և որ անընդունակ է եր-  
 կրի կուլտուրական պահանջների մասին հոգալու :  
 Քաղաքական ազատութիւն՝ նշանակում է  
 վերջ ցարի այժմեան համիշխանութեան և նրա  
 բիւրօկրատիայի : Աւտի, կառավարական իշ-  
 խանութեան բոլոր միջոցներով նրանք ձգտում  
 են ճնշել ամէն մէկ շարժում՝ ուղղւած քաղա-  
 քական ազատութեանը հասնելուն : Եւ այդ դէպ-  
 քում վերջին միջոցը հանդիսանում է զօրքը :  
 Այն օրերը, երբ ժողովուրդը յուզում է և կազ-  
 մակերպում քաղաքական ցոյցեր յանուն ազա-  
 տութեան, զօրքը մասամբ տեղաւորում է փո-  
 ղոցներում, մասամբ կանգնում զինուորանոցնե-  
 րում հրացանները ձեռքերին, պատրաստ՝ եթէ  
 շարժումը մեծ չափ ընդունէ՝ խեղդելու նրան  
 ժողովրդի արեան մէջ : Ոստիկանութեան ոյժերի  
 պակասութեան դէպքում՝ հետեւակազօրն ու հե-  
 ծելազօրը օգնում են ոստիկանութեանը՝ դանա-  
 կոծելու անդէններին :

III

ՄԻԼԻՏԱՐԻ ԶՄԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ԱՆՐԱՐՈՅԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՇԿՕԼԱ Է

Զօրքը ծառայում է բարձր դասակարգե-  
րին, — կապիտալիստներին ու ազնւականներին,  
— նւաճելու և կողոպտելու համար թոյլ ու ան-  
քաղաքակիրթ ժողովրդով բնակեցւած երկրնե-  
րը. զօրքը զինու զօրութեամբ ստրկացրած ժո-  
ղովուրդներին պահում է ստիպելու հպատա-  
կութեան մէջ և նա էլ է, որ ստիպում է պրօ-  
լետարիներին կրել կապիտալիստների հարստա-  
հարութիւնը, իսկ գիւղացիներին՝ կաւածա-  
տէր — ազնւականների հարստահարութիւնը .  
զօրքը Ուսաստանում, բացի այդ, ազգաբնա-  
կութեան բո՛լոր դասակարգերին պահում է  
հպատակութեան մէջ՝ միապետական մէկ բուռն  
չինովնիկներին, մէկ խօսքով, զօրքը հանդի-  
սանում է նեցուկ ամէն մէկ հարստահարութեան  
և ամէն մէկ կեղեքման, նա մէկ հիմնարկու-  
թիւն է, որը ծառայում է բարձր դասակար-  
գերի շահերին, նրանց կուի մէջ ստորին դա-  
սակարգերի դէմ. Բայց որոնցի՞ց է կազմուում  
ժողովրդի թշնամիներն այդ զօրքը .

Աճող մրցումը կապիտալիստական պետու-

թիւնների մէջ՝ ստիպում է նրանց, ինչպէս  
մենք տեսնում ենք, անընդհատ մեծացնել ի-  
րենց զինուորական ոյժերը : Այդպիսով, մէկը  
միւսի յետևից, բոլոր պետութիւնները եկան  
այնտեղ, որ մտցրին զինուորական ընդհանուր  
պարտաւորութիւն (Ուսաստանում մտել է 1874  
թւին) : Զինուորական ընդհանուր պարտաւորու-  
թեան ժամանակ, զէնք կրելու ընդունակ բո-  
լոր մարդիկ, հերթով զօրքի մէջ ծառայութիւն  
են անում : Իսկ դա նշանակում է, որ զօրքը  
գաղարում է լինելուց որոշ դասակարգ մարդ-  
կանց, որոնք կտրւած են մնացեալ ժողովուր-  
դից : Զօրքը դառնում է անբողջ ժողովրդի զին-  
ւած մասը : Եւ որովհետև ժամանակակից պե-  
տութիւններում ազգաբնակչութեան մեծամաս-  
նութիւնը կազմում են «ստորին», ազքատ դա-  
սակարգերը, այսինքն, չունենոր պրօլետարիա-  
տը և այն «հանկախ» մասսան խօզէիններն,  
որոնք տնտեսական յարաբերութեան մէջ կանգ-  
նած են պրօլետարի մակերևոյթի վրայ և վաղը  
կըղառնան այդպիսիք (ազքատ գիւղացիները,  
միայնակ արհեստաւորները, տնայնագործները)  
— բնական է, որ ժամանակակից զօրքը իրե-  
նից ներկայացնում է ժողովրդի ստորին դասա-  
կարգերի մէկ զանաւած մասը :

Եւ ահա ժողովրդի ստորին դասակարգերի  
մէկ զինւած մասը յայտնում է այն ոյժը, որը  
բարձր դասակարգերի ձեռքում ծառայում է  
հարստահարութիւնն ու կեղեքումը ամրապնդե-  
լու և խստացնելու համար, որոնցից տառա-

պում են ժողովրդի հէնց այդ ստորին դասակարգերը: Դուրս է գալիս, որ տառապող և կեղեքող աշխատաւոր մասան ամէն տարի իւր միջից ջոկում է մէկ քանի հարիւր հազար ամենաուժեղ և ամենաառողջ մարդիկ, որոնց պարտականութիւնն է սանձած պահել այդ մասսայի միւս ամբողջ մասը, օգնել նրա հարստահարիչներին հարստահարութեան գործում, նրանք չենք ինչ նրան նեղելու գործում:

Սա անմտութիւն չէ: Հրէշաւոր չէ՞ այն հակամտութիւնը, որ բանւոր դասագարգի մէկ մասը ա'մբողջ բանւոր դասակարգի թշնամիների ձեռքում մահակի տեղ է ճառայում:

Որպէսզի այդ հրէշաւոր երեւոյթը իրականութեան մէջ առաջանայ, — անհրաժեշտ է զինւորների մարդկային բոլոր զգացումները փչացնել, անկրաժեշտ է խորապէս անբարոյականացնել նրանց, որպէսզի ստիպեն մոռանալ ամէն մէկ կապի մասին՝ ժողովրդի հետ: Եւ պետութիւնը, որը ծառայում է հարստահարողների շահերին, գիտակցաբար իրեն նպասակ է դնում անբարոյականացնել ժողովրդի այն մասը, որը զէնքը ձեռին կանգնած է: Իւր ճառերից մէկում նորակոչների համար, գերմանական կայսր Վիլհելմ II-ը ասաց նրանց, որ պէտք է պատրաստ լինին այն օրւայ համար, երբ կայսրը կը հրամայէ կրակել իրենց սեպիակոսն հայրերի վրայ:

Այժմ տեսնենք թէ ժամանակակից կառավարութիւնը որպիսի միջոցներով է հասնում

զինւորների այդ անբարոյականացմանը, ուր նրանք, — ժողովրդի երեկւայ զաւակները և նրա կարիքի ու տանջանքների վաղան ընկերները, — այսօր լուռ, որպէս վարձու մարդասպաններ, կրակում են նրա վրայ՝ նրա թշնամիների հրամանով:

Ամէնից առաջ, զօրքի մէջ մտցրած երիտասարդը կտրուում է իւր ընտանիքից, իրեն ծանօթ և ճօտիկ շրջանից և նոյնիսկ իւր հարազար վայրից: Նիժնի-Նովգորոդցին Րիգա է գնում ծառայելու, Աստրախանի կալմիկը՝ Պետերբուրգ, հրէան Վիլնայից Նիժնի-Նովգորոդ կամ Տաշկենտ: Յատկապէս աւելի խնամքով իւր հայրենիքից քշում են հեռու՝ լեհերին, որովհետեւ լաւ գիտեն, որը լեհը զինւորական հագուստի մէջ չի սկսէ իւր լեհ-եղբոր վրայ կրակել, եթէ նա ոտքի կանգնէ ռուսական կեղեքման դէմ: Վերջին տարիներս ցարի կառավարութիւնը իրեն նպատակ դրեց ինչ էլ որ լինի ստիպել ֆինլանդացիներին ծառայելու՝ չ ուղղակի Ֆինլանդիայում, ինչպէս որ թոյլ է տրուում ֆանլանդական սահմանատրութեամբ (հիմնական օրէնքների, հաստատուած բոլոր ռուս ցարերի երդումով՝ Ալէքսանդր I-ից սկսած մինչ Նիկոլայ II-ը), այլ ռուսական նահանգներում: Կառավարութեանն այդ հարկաւոր է, որպէսզի Ֆինլանդիայում ռուս զինւորներ ունենայ, պատրաստ կրակելու ֆինլանդական ժողովրդի վրայ, եթէ նա հաստատ մնայ իւր սահմանագրութեանն, իրեն օրէնքներին և ազատ հիմ-

նարկութիւններին : Սակայն ֆինլանդացի ժողովուրդը, չընայած որ փոքրթիւ է, արիւթաբար կուում է իւր ազատութեան համար և զինուորական նոր օրէնքները մինչ օրս էլ գեռչեն մտցրած կեանքի մէջ :

Որպէսզի փայտի ուժով սովորէ մարդասպանի արհեստը, համազգեստով մարդը, պէտք է իրեն կափտանով և բանուորական բլուզով շըրջապատող մարդկանց վրայ նայէ, որպէս ուտարներէս վրայ, հարկաւոր է նրան այնպիսի պայմանների մէջ դնել, որպէսզի զինուորանոցի սահմաններից դուրս, նա, ծառայութեան ամբողջ ժամանակի ընթացքում, ոչ մէկ սրտին մօտ շահ չունենայ, որը այդ ժամանակում լցնէր նրա կեանքը :

Բայց սնային, ընտանեկան և ընկերական սարգ ու կարգը և արդիւնաւէտ աշխատանքը, քիչ զարգացած և գեռ չըկարգաւորած մարդու համար, որպիսին հանդիսանում է երիտասարդ նորակոչը, գլխաւոր դպրոցն է, ուր նա քառոյսպէս է կրթում : Բռնութեամբ կտրելով նրան այդ դպրոցից և հնարաւորութիւն չըտալով հասարակական և մտաւոր այս կամ այն աւելի լայն շահերով լցելու \*), զինուորական ծառայութիւնը նպաստում է զինուորների քա-

\*) Ձինուորական իշխանութիւնը չէ խրախուսում, այլ մեծ մասամբ եւ ուղղակի հալածում է ընթերցանութիւնը զինուորների մէջ : Նոյնիսկ ազատ երկիրներում, չըխօսելով արդէն Ռուսաստանի մասին, զինուորներին արգելում է սեւէ ընկերութեան մասնակցել :

ռոյսպէս կոպսանաշուն և վայրենանաշուն, նրա անքառոյսկացմանը : Օգտակար աշխատանքի և խելօք պարապմունքների բացակայութիւնը հեշտութեամբ է նպաստում այն բանին, որ երիտասարդ զինուորը ծառայութիւնից ազատ ժամանակը տրուում է արբեցողութեան և սեռական անբարոյականացման : Ինչպէս բոլորին յայտնի է, զօրքերի կուտակման տեղերը հանդիսանում են շրջակայ կին բնակչութեան անբարոյականացման աղբիւր, իսկ «քրիստոնէասէր զինուորականութիւնը», որպէս սպայականութիւնը, նոյնպէս և զինուորները, — ստեղծում են պոռնկութեան գլխաւոր պահանջը (այդ կողմից, ասենք, զինուորանոցների կողքին կանգնած են կոյսերի վանքերը) : Յայտնի է որ զինուորանոցները նոյնպէս հանդիսանում են սիֆիլիսը տարածելու գլխաւոր կենտրոնատեղերից մէկը :

Ձինուորի անբարոյականանալը և կոպտանալը, — աննուզղակի եղրակացութիւն է կեանքի այն պայմանների, որոնց մէջ նրան գնում է միլիտարիզմը նրա համար, որ նրա միջից դուրս նետէ իրեն նախկին բնութիւնը՝ գիւղացիական կամ պրօլետարական : Ձինուորը պատասխար է դադարել ոչ միայն մարդ լինելուց՝ մարդկային զգացումներով և մտքերով, այլ նա պարտաւոր է դառնալ մեքենայ սպանութեան համար, պատրաստ անելու այն ամէնը, ինչ հրահանգւած է իշխանութիւնից : Եւ զինուորանոցի ծեծի ամբողջ սիստէմը ուղղւած է այն բանին,

որ զինւորին դարձնեն մէկ այդպիսի անխօս մեքենայ :

Եւեծը և անխեղճ պատիժները իւրաքանչիւր մանրիկ սխալի համար. զինւորի խոհարար, սարուկ դառնալը իրեն բազմաթիւ չինօվնիկներից ամէն մէկի առաջ. յատուկ զինւորական դատարանները, որոնք գործերը քըննում են ոչ թէ ընդհանուր այլ առանձին զինւորական օրէնքների հիման վրայ. — դրանք են այն միջոցները՝ պահպանելու զինուորական դիսցիպլինը, որի օգնութեամբ ժամանակակից միլիտարիզմը ստեղծում է իրեն համար հարկաւոր մարդկային մեքենայ՝ մարդիկ սպանելու համար : «Զինւորը կազմի մէջ՝ դիակ է», այդ բառերով որոշեց Կիւի զինւորական շըրջանի կառավարիչ յայտնի գեներալ Գրազօմիրովը, թէ ինչ պէտք է լինի «որինակելի» զինւորը : Որքան քիչ է «խօսում» զինւորը, որքան աւելի անմիտ է նա, այնքան աւելի է հարկաւոր իւր «սրբազան» կոչումը կատարելու համար : Մտրակել ու կարգապահ բատալիօններ, տաժանակիր աշխատանքու հրացանազարկ անել, — ահա դրանք են սարսափեցնող միջոցները, որոնցով ազդում են մարդկային անհնազանդ բնութեան վրայ, սպանելու համար մարդու մէջ ամէն մէկ ինքնուրոյնութիւն, անձնական արժանաւորութեան ամէն մէկ զգացում, զինւորի միջից ջնջելու համար «խօսելու» ամէն մէկ ցանկութիւն :

Իսկ որպէսզի մարդու համար գիւրացնեն

այդ անխօս գործիք դառնալը, թուլացնելու համար նրա բնական ընդդիմութիւնը, — դրա համար ժամանակակից հասարակութիւնը հասարակապետականօրէն է կրթում իւր երիտասարդութեանը : Գարոցն ու եկեղեցին, պետութիւնն ու գրականութիւնը փառաբանում են զինւորական արհեստը, որպէս աւելի բարերար գործունէութիւն յօգուտ հայրենիքի : Մնացեալ բոլոր ժողովուրդները յայտարարում են, որպէս մեր ժողովրդի «թշնամիներ» և այդ երևակայական թշնամիներից պաշտպանելու համար, իբր թէ հարկաւոր է զօրք, հարկաւոր են «լաւ զինւորներ» և, հետևաբար, հարկաւոր է զինւորանոցի դիսցիպլին, զինւորական դատարաններ և իշխանութեան ձեծելը, — այն ամէնը, որոնցով ստեղծում են այդ «լաւ զինւորները» : Ժամանակակից մարդը մանկութիւնից սովորում է պատերազմը և զինւորական դասը աստեածացնել. զինւորական խնջոյքներն ու քննութիւնները, իրենց թատրոնական ճոխութեամբ ու հանդիսաւորութեամբ ծառայում են նրան, որ տղէտ մարդկանց գլուխը խօթեն կրօնական յարգանք դէպի զինւորականութիւնը : Գրականութիւնն ու գարոցը փառաբանում են աւելի յայտնի զօրավարների՝ որպէս «հերոսների», իսկ պատմութեան գասագրքերը աւելի շատ զբաղւած են պատերազմական արշաւանքների և ճակատամարտերի նըկարագրութեան պատմութեամբ, քան թէ ժո-

ղովրդներին ներքին կեանքով և նրանց կուլտուրական զարգացմամբ :

Զարմանալի չէ որ մարդը մինչ զինւորանոց ընկնելը, որը ստանում է պետական — «հայրենասիրական» կրթութիւն — ոչ միայն կամաւոր հպատակում է զինւորանոցի ծեծին, այլև միշտ ու ամէն տեղ դառնում է զինւորական ծառայող «ոչ միայն սարսափի, այլև խղճի պատճառով», սկսում է հպարտանալ իւր անլեզու անասուն դառնալովը և լցում է սիրով դէպի իւր «համազգեստն» ու համազգեստի «պատիւը» : Հին, արժանաւոր զինւորների մէջ քիչ չեն զինւորանոցի այդպիսի անշահասէր երկրպագուներ : Հէնց նրանք են նպաստում նորակոչների «ապշացներուն», նրանց «խակական» զինւորներ դարձնելուն, այսինքն անբարոյականացնելուն ի փառս «գահի և հայրենիքի» :

Ըստինքեան հասկանալի է, որ զինւորանոցի՝ անբարոյականացմանը, որը անհրաժեշտ է դասակարգային պետութեանը իրեն նպատակների համար, այնքան աւելի հեշտութեամբ կարելի է հասնել, որքան աւելի տգէտ է այն մարդկային մասսան, որից զինւորական դիւցիպլինը պէտք է կենդանի խրաւրակ թխէ մարդիկ սպանելու համար : Հնումը զինւորական հրամանատարները արտայայտեցին այդ միտքը ամենասակեղձ կերպով, որովհետև զինւորը ամէնից առաջ քիչ պէտք է վարակէ «խոհեղով» : Ներկայումս, էպպէս մեր զօրա-

վարները մտածում են ճիշտ այդպէս, բայց այժմ նոյնիսկ գեներալ Դրազօմիրովները, մէկ շրջաբերականում ասելով որ զինւորը պէտք է «դիակ» լինի, միևսով շտապում են իրենց հրպատակներին նախազուշացնել, որ այդ շրջաբերականները պէտք է գաղտնի մնան : Ոչինչ չես կարող անել, ժողովուրդը սկսեց աւելի այլ կերպ նայել իրերի վրայ և նրանից, — իհարկէ, հէնց իւր էլ օգտին, — ստիպած են ծածկել որ իրեն դեռ ևս «սուբբ անասուն» են համարում (այդպէս անւանեց ռուս զինւորին մարդկանց նշանաւոր կոտորող Սկոբելեվը) : Ժողովրդական մասսան զարգանում է, սովորում է յտածել որպէս մարդ, յարգել իւր մարդկային արժանաւորութիւն ու պահանջել, որ իրեն մարդ են, այսպէս անւանւած, «բարձր» դասակարգերը : Սակայն մարդկային արժաւորութեան այդ բարձրանալը և մարդկային մտքի զարգացումը՝ սպառնում են միլիտարիզմի ուղղակի հիմունքները փշրել : Ինչպէս մենք տեսանք, միայն մարդուն անմարդի դարձնելով, միայն նրա մարդկային արժանաւորութիւնը ցեխի մէջ ձգելով, միայն նրա մէջ ազատ միտքը մեռցնելով է, որ զինւորանոցը հասնում է անբարոյականացմանը այն զինւորի, որը պատրաստ է այսօր կրակել չինացիների վրայ, վաղը լեհերի, իսկ միւս օրը մուսուլման կամ դորժարանական բանւորի վրայ : Ուստի զինւորական դասը, — այսինքն նրանք, որոնք միլիտարիզմի հաշուով են ապրում, — շահագր-

գուած է ժողովրդի զարգացումը կանգնեցնելու մէջ, շահագրգռած է նրանում, որ ժողովուրդը խարխախէ տղիտութեան և ստրկութեան մէջ: Չինեորական դասը ամէնուրեք հանդիսանում է քաղաքական և հասարակական կազմի մէջ ամէն մէկ հնութեան յենարան. քահանայական դասի կողքին, Չինեորական դասը ամէն տեղ գուրս է դալիս որպէս թշնամի իւրաքանչիւր ռամկավարական շարժման, աղատութեան իւրաքանչիւր ձգտման:

IV

ՄԻԼԻՏԱՐԻՉՄԻ ԴԷՄ ԿՌԻԻԸ ԱՉԱՏ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Եւ դա կատարելապէս բնական է, որովհետեւ ռամկավարութիւնը (ազատ ժողովրդական կառավարութիւնը) թշնամի է միլիտարիզմին, նա պահանջում է ոյնյացնել այդ:

Մշտական զօրքը. ինչպէս մենք տեսանք, ժամանակակից դասակարգային պետութեան ձեռքում հանդիսանում է գործիք կեղեքելու: Մշտական զօրքի սիստէմը հայրենիքի շահերը պաշտպանելու համար չէ՛ երևան եկած, այլ պահպանելու համար զօրացումը հարստահարիչների տիրապետութեան՝ հարստահարողների վրայ, բուրժուազիայի տիրապետութեան՝ պրօլետարիատի վրայ: Ուստի պրօլետարիատի արմատական պահանջներից մէկն է հանդիսանում՝ նրա դասակարգային կռումը բնդդէմ բուրժուազիայի՝ մշտական զօրքը վերածնելու պահանջը:

Այդ վերացումը պրօլետարիատը պահանջում է, որպէս անհրաժեշտ պայման քաղաքական իսկական ազատութեան, իսկական ռամկավարական կառավարական կերպի: Անհասկանալի է իսկական ազատութիւնը, քանի դեռ պետա-

կան իշխանութիւնը, ինչպիսի էլ որ նա լինի. իւր ձեռքում զինուորական հսկայական ոյժ ունէ, որը նա կարող է ուղղել ժողովրդի դէմ: Անհասկանալի է ազատ ռամկավարական կազմը, մինչ այն ժամանակ, քանի դեռ ժողովրդի նշանաւոր մասը, աստիճանաբար փշաշոււմ է ու կրթւում ժամանակակից զինուորանոցի պարտադիր ծառայութեան ստրկական ոգով: Անհնար է ազատութեան և քաղաքական հաւասարութեան թագաւորութիւնը, քանի դեռ պետութեան մէջ կայ սպաների մէկ արտօնեալ դաս, որը քաղաքացիների մասսայից անջատւած է շինական պատով, — առանձին օրէնքներով, համալրող ետի պատրիս մասին առանձին հասկացողութիւններով, առանձին բարոյականութեամբ, որը թոյլատրելի է համարում այն, ինչ արգելւած է հասարակականացուներին (օր. մենամարտերը):

Պրօլետարիատը պահանջում է մշտական զօրքի վերացումը նրա՛ համար, որ միլիտարիզմի սիստէմը, որը պահպանւում է նրանով, զօրքով, — մեծ խոչընդոտ է հանդիսանում առաջադիմութեան գործին, այսինքն, ժողովրդի մէջ սօցիալիստական գաղափարները զարգացնելուն: Միլիտարիզմը արհեստական կերպով պահպանում է ազգութիւնների մէջ անհամերաշխութիւն, գրգռում է մէկ ժողովրդին միւսի դէմ և ժողովրդի զաւակների մտքերը, այսպէս անւանւած, հայրենասիրական խնդիրների համար, կտրում է գործէցը

կուրի՝ յանուն իրենց դրութեան բարւոքման: Պրօլետարիատը կուււմ է մշտական զօրքի վերացման համար նոյնպէս և այն պատճառով, որ միշտ զօրացող միլիտարիզմը հանդիսանում է, ինչպէս մենք տեսանք, ազգաբնակչութեան կոշտանալու և անբարոյականանալու անընդհատ աղբիւր:

Պրօլետարիատը կուււմ է միլիտարիզմի դէմ, որովհետև միլիտարիզմը քայքայում է ժողովրդին, վերջինիցս պահանջում է միշտ նորանոր գրամական զօհողութիւններ, հարիւր հազարաւոր առողջ մարդկանց կտրում է արտադրող աշխատանքից և հէնց դրանով մեծացնում է աշխատանքի նեղութիւնները մնացեալ ժողովրդի համար:

Եւ, վերջապէս, պրօլետարիատը կուււմ է միլիտարիզմի դէմ նրա համար, որ մշտական զօրքի գոյութիւնը հանդիսանում է յաւիտենական սպառնալիք խաղաղութեան, ստեղծում է մշտական երկիւղ համաշխարհային սոսկալի պատերազմի, որը պէտք է կոտորէ միլիոնաւոր մարդիկ և մարդկութիւնը յետ ձգէ:

Սակայն ինչո՞վ կարող է փոխարինել մըշտական զօրքը: Մի՞թէ սօցիալիստ պրօլետարիատը ուզում է հայրենիքը թողնել առանց պաշտպանելու միջոցների:

Ո՛չ: Պահանջելով մշտական զօրքի վերացում, սօցիալիստական բանւորական կուսակցութիւնը պահանջում է փոխարինել այն ժողովրդային զինաւորութեանը (միլիցիայով):

Բոլոր երիտասարդ քաղաքացիներին սովորեցրէք զինւորական արեւստը՝ նրանց երկար ժամանակով չըկտրելով արագրող աշխատանքից և առօրեայ սովորական կարգ ու սարգից, տէք զինւորական գործը սովորած իւրաքանչիւր քաղաքացուն անհրաժեշտ զէնք և, — հաւատացէք, — երբ նրանից պահանջէ ունէ արշաւանքից պաշտպանել հայրենիքը, նա այդ պարտքը կըկատարէ շատ լաւ, չընայած նրան, որ համազգեստով և ուսնոցներով չի լինի։ Այն սակաւաթիւ երկրները, ուր մշտական զօրք չկայ, այլ ժողովրդային զինաւորութեան սխտէմն է տիրապետողը (միլիցիա), ինչպէս օրինակ, Շւեյցարիան, այդ բանում բոլորովին չեն զղջում։ Փոքրաթիւ բօէրները մշտական զօրք չունէին, բայց իւրաքանչիւրը շատ լաւ է տիրապետում հրացանին և բօէրական միլիցիան 3 տարի շարունակ հերոսաբար կռիւմից անդ լիացիների դէմ, որը ասքանչելի մշտական զօրք ունէր։

Զինւորականութիւնը երեւակայում է, որ ժողովրդական զինաւորութեան սխտէմի օրով անհնար է այն գիտցիպիւնը, որի շնորհով միայն կարելի է աջողութեամբ կառավարել տասնեակ և հարիւր հազարաւոր մարդկանց։ Սակայն սխալում են զինւորական գործի մասնագետները, երբ կարծում են թէ զինւորական գործի մէջ անհրաժեշտ գիտցիպիւնը հնարաւոր է միայն փայտի զօռով, միայն ստրկաբար հպատակելու սկզբունքներով, որոնցով լըց

ւած է ժամանակակից զօրքը։ Բացի ոյժով նրանց վզին փաթաթած և սարսափով պահպանւած գիտցիպիւնից գոյութիւն ունէ մէկ գիտցիպիւն էլ, որը կամաւոր կերպով ընդունում են մարդիկ, գիտակցելով, որ իրենք անում են մէկ գործ, որը անհրաժեշտ է իրենց սեփական շահերի համար։ Առանց գիտցիպիւնի, այսինքն, առանց մէկ ունէ կանոնի անպայման ենթարկելու, անհնար է, օրինակ, և՛ աշխատելը արդիւնաբերական խոշոր ձեռնարկութիւնների մէջ։ Ժամանակակից հասարակութեան մէջ, այդ անհրաժեշտ գիտցիպիւնը կապիտալիստը պահպանում է բիրտ բռնութեան միջոցներով, — խիստ վերաբեմունքով, խիստ տուգանքներով ու գործից հեռացնելու երկիւղով և, հետեւաբար, սովի երկիւղով։ Ուրիշ միջոցներով անկարելի է կարգ պահպանել ժամանակակից գործարանում, ուր բանւորները արդիւնաբերութեան աջող ընթանալու մէջ ոչ չեն լիցի շահագրգռւած լին և որից իրենք ոչ մտում են և ոչ էլ տաքանում։ Իայց ահա նոյն այդ բանւորները միանալով մէկ ունէ պրօֆեսիօնէլ միութեան կամ բանւորական կօօպերատիւ ընկերութեան և կամ բանւորական քաղաքական կուսակցութեան հետ, որը իւր մէջ պարփակում է տասնեակ հազարաւոր մարդիկ և կամ վիթխարի մէկ գործադուլ կազմակերպելով, — նոյն այդ բանւորները ընդունակ են հանդիսանում պահպանելու իրենց

չըջանում այն դիսցիպլինը, որը անհրաժեշտ է իրենց դրած նպատակին հասնելու համար: Բանւորական կազմակերպութիւններ յիշել, առանց բռնութեան և օրէնքի օգնութեան, թագաւորում է մէկ դիսցիպլին՝ ոչ պակաս քան գործարանականը, սակայն վերջինիցս առաւել նրանով, որ այդ դիսցիպլինը կամաւոր և գիտակցաբար պահպանում են մարդիկ, որոնք հասկանում են, թէ դա անհրաժեշտ է իրենց շահերի համար: Եւ արիւնաբերութիւնը ապագայ սօցիալիստական հասարակութեան մէջ՝ այդպիսի էլ դիսցիպլինի կրայ է կենալու, ուր չեն լինի այլևս «խօզէին»-գործարանատէրեր՝ բանւորների վրայ իրենց ունեցած անսահման իշխանութեամբ:

Քաղաքացին, որը գիտէ թէ ինչ բանի համար է կռոււմ, աւելի՛ լաւ կը կուէ միշտ, քան զինւորը, որը փայտի զօռով պատրաստ է աջ ու ձախ խփելու: Այդպիսի քաղաքացին կը հնազանդուէ և՛ անհրաժեշտ դիսցիպլինին: Բայց դրա համար էլ այդ տեսակ քաղաքացին չի գնայ կրակելու իրեն հարազատ եղբօր և գործադուլ սարքող աշխատանքի իրեն ընկերի վրայ: այդ տեսակ քաղաքացին կը հրաժարուէ վարժեցրած մարդասպանի դեր կատարելուց՝ կապիտալ ազայի պատուէրի համաձայն: Եւ այդ տեսակ քաղաքացին՝ միշտ պատրաստ կը լինէ օգտուելու զինւորական արհեստի իւր գիտութիւնից և իւր զէնքից, որպէսզի վճռական ընդդիմութիւն ցոյց տայ ժողովրդի թշնամիներին:

աւելն մէկ փորձին՝ ձեք տալ ժողովրդի իրաւունքներին:

Ժողովրդային զինւորութիւնը հանդիսանում է, ուրեւն, ժողովրդի ազատութեան աւելնալու նեցուկը:

Եւ հէնց դրա համար է, որ ժամանակակից հասարակութեան մէջ տիրապետող բոլոր հարբատահարիչները մշտական զօրքի կողմն են բռնել և չեն ուզում ժողովրդային զինւորութիւն: Միայն սօց. - դեմօկրատիան է, որ, ինչպէս բանւոր դասակարգի կուսակցութիւն, կուում է մշտական զօրքի վերացման համար: Եւ բուրժուազիայի դիմադրութիւնը կոտորելով է, որ պրօլետարիատը կը հասնէ միլիտարիզմի ոչնչացմանը, այսինքն, մշտական զօրքը վերացնելուն և ժողովրդային զինւորութիւն մտցնելուն: Միայն պրօլետարիատի կուսակցութիւնն է հանդիսանում միլիտարիզմի աջորդական թշնամին: Միւս դասակարգերի մէջ էլ գտնուում են գործիչներ որոնք խոստովանում են ժամանակակից միլիտարիզմի բոլոր կորստաբեր հետևանքները: Սակայն գործնականում բոլոր ոչ-սօցիալիստ կուսակցութիւնները ստիպւած են աջակցել միլիտարիզմի զարգացմանը, որովհետև այդ է պահանջում դասակարգային շահը բուրժուազիայի, որի առաջ անզօր են առանձին ազատամիտների և ռամկավարականների բոլոր քարի ցանկութիւնները: Յանուն երևակայական «հայրենասիրութեան» գրգռած «հասարակական կարծիքի» զօրութեամբ, բուրժուազիան

հարկադրում է իրենից գեռ կապերը չըկտրած քաղաքագէտներին նպաստել, այսպէս անւանւած, հազգային հղօրութեան զարգացմանը, քէ տալ պառլամենտներում զօրքի նոր ծախսերի համար, նաւատօրմի զօրեղացման համար, առանձին շինւորական դատարաններ պահելու համար, այն միջոցների համար, որոնք ուղղւած են շինւորական «դիսցիպլինը» խստացնելուն :

Միլիտարիզմի սեղանի վրա, ի այդ բոլոր զոհերի դէմ երոպական պառլամենտներում քէ են տալիս բանւորական կուսակցութեան ներկայացուցիչները, — սօցիալ-դեմօկրատները : «Ո՛չ մէկ մարդ, ո՛չ մէկ կոպէկ միլիտարիզմի համար» — այս է գերմանակ սօցիալ-դեմօկրատիայի նշանաբանը : Նա չէ ճնշում նրանից, որ ամէն մէկ հրապարակի վրայ անւանում են իրենց «հայրենիքի լծնամիներ» : Ամէն անգամ, երբ քննում է շինւորական մինիստրութեան բիւջէն, սօցիալ-դեմօկրատները պառլամենտներում մերկացնում են ժամանակակից միլիտարիզմի բոլոր լծւառութիւնները և պահանջում մշտական զօրքը փոխարինել ժողովրդային շինւորութեամբ (միլիցիայով) : Սօցիալ-դեմօկրատները առիթ չեն բաց թողնում, յայտնելու իրենց թերթերում բոլոր անգթութիւնների մասին, որոնք կատարւում են զօրքի մէջ շինւորների վրայ՝ յանուն «դիսցիպլինի» : Նրանք բաց են անում յատուկ շինւորական դատարանների զգուշութիւնը և պահանջում նրանք փոխել

ու բոլոր յանցանքները քննել ընդհանուր շինւորական դատարաններում : Մէկ խօսքով, սօցիալ-դեմօկրատները անդադար ագիտացիայով տաշում են միլիտարիզմի հիմքերը, ժողովրդական լայն մասնանրի մէջ տարածելով նրան «չնչացնելու անհրաժեշտութեան գիտացութիւնը» :

Սօցիալ-դեմօկրատները դրանով չեն բաւականանում : Նրանք աշխատում են մուտք դործել ուղղակի շինւորանոցները, ուր և տանում են սօցիալիզմի պրօպագանդը : Այդ ուղղութեամբ ամէնից շատ գործել են բելգիական սօցիալ-դեմօկրատները : Նրանք հիմնադրեցին, այսպէս կոչւած, «երիտասարդ սօցիալիստական դւարդիս», — բանւոր երիտասարդութեան կազմակերպութիւն, որին սպասում է ծառայութիւն զօրքի մէջ : Այդ «դւարդիսի» անդամները, ընկնելով շինւորանոցը, հանդիսանում են պրօպագանդիստներ կուր՝ ընդդէմ միլիտարիզմի : Նոյն տեսակ «դւարդիս» հիմնադրում են և Ֆրանսիայում : Յատկապէս շինւորների համար գոյութիւն ունին թերթեր, որոնք սօցիալիստներն են հրատարակում :

Մայիսի 1-ի բանւորական տօնը սօցիալիստների ձեռքում ծառայում է որպէս համաշխարհային ցոյց միլիտարիզմի դէմ՝ յանուն պահանջի՝ մշտական զօրքը փոխարինել ժողովրդային շինւորութեամբ :

էլ չէր կարող մնալ, եթէ չըկարողանար յենել միլիտոնաւոր զօրքի վրայ, որ կռել են զինուորական զիսցիպլինով և որը պատրաստ է իշխանութեան հրամանով կրակելու ժողովրդի վրայ: Մեր կողմը քաջել զօրքը կամ նրա մէկ մասը, — նշանակում է միապետութեանը մահացու հարած հասցնել:

Այն ժամանակ, երբ Եւրոպայի միւս ժողովուրդները կուում էին քաղաքաւան աղատութեան համար, նրանց աջողակեց ձեռք բերել զօրքի այդ աջակցութիւնը: Յեղափոխութիւնները կատարել են ժողոցների կռիւների միջոցով բարրիկադների վրայ, բայց այդ կռիւը — ուր կազմակերպւած և լաւ զինւած զինւորական ոյժի գէմ կանգնած էր անկազմակերպ և լաւ չըզինւած ժողովրդային մասան, — այդ կռիւը կարողացաւ վերջանալ ժողովրդի յաղթութեամբ միայն նշա համար, որ զինւորները իրենց հոգու խօրքում համակրում էին ապստամբութիւնը, թոյլ ու զժկամակութեամբ էին գործում ժողովրդի գէմ, իսկ յարմար ժամին ամբողջ գունդերով անցնում էին նրա կողմը: Միւս կողմից կառավարութիւնը զգալով, որ զօրքը անյուսատրելի է, ինքն իրեն կորցրեց, չէ վճռում մէկ անգամից զինւորական ոյժ հանել գործի, ժողովրդին ամրապնդելու միջոց աւելց, զինւորներին հակասական հրահանգներ տւեց, և դրանով նրանց վերջնականսպէս մարտեցրեց և իրեն գէմ գրգռեց: Ձեռք բերել զօրքի մէջ այդպիսի արա-

V.

ԿՈՒԻՐ ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ԴԷՄ ՌՈՒՍՍՍԱԿՆՈՒՄ

Եւրոպական ազատ երկրներում կռիւը միլիտարիզմի գէմ առաջ է տարւում սովորական օրինական միջոցների օժանդակութեամբ, որոնք տալիս է երկրի սահմանադրութիւնը բանւոր դասակարգին, — պառլամենտական ազիտացիայի օգնութեամբ, բանաւոր և գրաւոր ազատ խօսքով, ազատ կազմակերպութեամբ:

Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատական բանւորական կուսակցութիւնը զուրկ է այդ բոլոր օրինական միջոցներից: Միապետական կարգը բանւոր դասակարգին ոչ մէկ լեզալ զէնք չէ տալիս՝ կռելու իրեն պահանջների համար: Հնարաւորութիւն ունենալու համար լայն և աջող կռիւ մղելու միլիտարիզմի գէմ, բանւորական կուսակցութիւնը Ռուսաստանում պէտք է հասնէ փաղաքական ազատութեան, պէտք է օտապալէ միապետութիւնը:

Այն ինչ հէնց միլիտարիզմն է, որ հանդիսանում է ռուս միապետութեան յենարանը: Նա այն աստիճան անմիտ ու անխելք է, նա այնպէս կարողացաւ ազգաբնակչութեան բոլոր դասակարգերը իրեն գէմ զինել, որ մէկ օր

մադրութիւն, կառավարութեան շարքերու  
այդպիսի անվտանգութիւն. — այդ է ուստի սո-  
ցիալ-դեմոկրատիայի անյետաձգելի խնդիրը,  
եւ որքան յաճախ պատահեն զինուորների զին-  
ւած յարձակում ժողովրդային բազմութեան  
վրայ, այնք ն աւելի է յեղափոխական շար-  
քերում թափանցում յեղափոխական խօսքի  
զինուորանոցները տանելու գիտակցութեան ան-  
հրաժեշտութիւնը :

Այդ ուղղութեամբ ա գէշ մէկ քանի քայլ  
արած է : Սոցիալ-դեմոկրատական կուս կցու-  
թեան կօմիտէտները նորակոչների մէջ ազի-  
տացիա են անում : Զինուորանոցի ծեծից դեռ  
չըմտապաշտ, ջերմ կերպով դեռ շղարկել իրենց  
հարազատներից բաժանելու վիշտը, նորակոչ-  
ները յատկապէս լաւ հող են ներկայացնում յե-  
ղափոխութիւն սերմանելու համար : Մէկ քանի  
տեղ (Արեւմտեան երկրում) բանւորները ցոյցեր  
են սարքում նորակոչներին ճանապարհ ձգելիս  
և վերջիններս զինուորանոցներն են տանում յի-  
շուղթիւն յրենց համերկրացիների ամբօխի  
մասին որոնք կանչում էին՝ «կորչի՛ միապե-  
տութիւնը», «կորչի՛ մշտական զօրքը» : Մէկ  
քանի տեղ զինուորների մէջ արդէն յեղափոխա-  
կան խմբեր կան, որոնք անդադար պրօպա-  
գանդ են անում : Սոցիալ-դեմոկրատների կող-  
մից մի շարք կոչեր են հրատարակւած զին-  
ւորներին ու սպաներին, ժողովրդակօն ցոյցե-  
րի և գործադուլների ժամանակ, երբ զօրք էր  
ուղարկում խաղապանելու համար : Մեր կու-

սակցութիւնը այն ժամանակ կարող է այդ ա-  
զիտացիան ուղիղ հողի վրայ դնել ու ընդլայ-  
նել բաւականաչափ, երբ վերջնականապէս կը-  
միաուորէ ու կըստեղծէ կենտրոնական ամուր  
կազմակերպութիւն, զօրեղ կենտրոնական վար-  
չութիւն, որը կըկարողանայ զօրքի մէջ ազի-  
տացիա անելու գործի համար յատուկ ոյժեր  
դուրս բերել և այդ նպատակի համար կ'օգտէ  
զինւորների և սպաների այն յեղափոխական  
խմբերից, որոնք արդէն աչքի առաջ են :

Գիտակից բանւորները պէտք է օգտեն  
բոլոր յարմար առիթներից նրա համա, որ  
զինւորներին տրամադրեն դէպի մեր գործը :  
Ծանօթանալով զինւորների հետ, ինլեզալ մա-  
մուլում մերկացնելով փաստերը, բնորոշող ուս-  
զինւորի իրաւագուրկ դրութիւնը, առանձնա-  
պէս ուշադրութիւն դարձնելով բանւոր երի-  
տասարդութեան վրայ, որին ծառայութեան  
գնալ է սպասում, — այդ բոլորով գիտակից  
բանւորները կարող են դիւրացնել յեղափոխա-  
կան գաղափարների մուտքը՝ զինուորանոցները :  
Այն դէպքում, երբ գործաթող կամ ցուցարար  
բանւորների դէմ զօրք կ'ուղարկէ, բանւոր-  
ները պէտք է դէպի նրանց գառնան կոչերով,  
պէտք է ցոյց տան, ուր զինւորի մէջ հէնց  
նոն բանւոր մարդն են տեսնում, որը իրեն  
տգիտութեան շնորհով ժողովրդի թշնամիների  
ձեռքում ծառայում է որպէս կոյր գործիք :  
Արեւմտեան Եւրոպայի պատմութեան մէջ հազ-  
ւագիւա զքն դէպքեր, երբ բանւորների դէմ

ուղարկեաժ զինւորները լցել են համակրու-  
թեամբ դէպի նրանք այն բանից յետոյ, երբ  
բանուոր ամբօխի հետ հէնց առաջին հանդիպե-  
լուն լսել են նրա աղաղակը՝ «կեցցէ՛ն զին-  
ւորները» :

Փողոցների կոււի պրակտիկան ուսուցանում  
է, որ խիստ կարևոր է՝ երբ ժողովրդային  
մասսան ընդհարում է զինւորական գնդի հետ՝  
հէնց սկզբից զինւորների սեղմած շարքերը  
քայքայել : «Զինւորը կազմի մէջ դիակ է» —  
Դրագօմիրօվի այդ խօսքերը ուղիղ ազդեցու-  
թիւն են թողնում կազմ շարքի զինւորների  
տրամադրութեան վրայ որ նա իրեն մեծ մե-  
խանիզմի մէկ փոքրիկ ձող է զգում, որը զե-  
կավարում է կառավարողի կամքով : Իսկ երբ  
շարքերը քայքայւած են, երբ բաղմութիւնը,  
— տղամարդիկ ու կանայք, — գունդը բաժանել  
է փոքրիկ խմբերի, այն ժամանակ զինւորնե-  
րը դառնում են աւելի անկախ ու մատչելի  
մարդկային այն զգացմունքների ներգործու-  
թեանը, որոնք ջնջում է զինւորական «դիտ-  
ցիպլինը» :

Սոցիալիստական ազիտացիան ազգաբնա-  
կութեան որքան աւելի լայն շրջաններ ընդ-  
գրկէ, մեր թռուցիկնե ուժ ու թերթերում  
որքան աւելի խօսէ աշխատաւոր մարդու բո-  
լոր կարիքների և միապետութեան բոլոր յան-  
ցանքների մասին, — այնքան աւելի քաղաքա-  
յին և գիւղական երիտասարդութիւնը յեղափո-  
խական գաղափարի ներգործութեան համար

պատրաստած ոտք կըկոխէ զինւորանոցները :  
Իսկ որքան յաճախ կ'առաջանան ը՛դհարում-  
ներ ժողովրդի և զօրքի մէջ, այնքան աւելի  
զինւորներին կըբռնէ յուզիչ տրամադրութիւնը,  
նրանց այնքան աւելի մեծ քանակութիւնը,  
կըխորհէ այդ ընդհարումների պատճառների  
մասին, այնքան աւելի հարցեր կըծագեն նը-  
րանց գլուխներում :

Բանւորական կուցակցութեան նպատակն է,  
շարունակելով իւր ազիտացիական գործունէու-  
թիւնը ազգաբնակչութեան լայն մասսաների մէջ,  
— անմիջական պրօպագանդով զինւորների մէջ,  
նպաստել այն բանին, որ մօտենայ ըոպէն, երբ  
յեղափոխական ամբօխի առաջ կախ կ'ընկնեն  
զինւորների հրացանները և երբ զինւորների  
շարքերի միջից կըլսէ ողջոյնի ճիչը՝ «կեցցէ՛  
ժողովուրդը : Կեցցէ՛ աղատութիւն» : Եւ այդ  
աղաղակը ժամանակակից միապետութեան թաղ-  
ման հիմնը կըլինի :

Վ Ե Ր Զ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն



	<i>Երևո</i>
I. Սպառազինումների զարգացումը, Միլի- տարիզմի բեռը Ռուսաստանում . . .	3
II. Ժամանակակից միլիտարիզմի պատճառները 11	
III. Միլիտարիզմը ժողովրդին անբարոյակա- նացնելու շփոթ է . . . . .	34
IV. Միլիտարիզմի դէմ կռիւը ազատ երկր- ներում . . . . .	45
V. Կռիւը միլիտարիզմի դէմ Ռուսաստանում 54	



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես տող	Տպւած է	Պէտք է լինի
12.17.	ձեռնարկութիւննիբը	ձեռնարկութիւնները
22.	4. այնպէս . . . . .	այսպէս
»	23. այնահղ. . . . .	այնտեղ
27.	24. հապիտալիստների	կապիտալիստների
32.	13. սաղնդուխքի . . .	սանդուղքի
35.	25. զանւած. . . . .	զինւած
37.	22. ֆանլանդական. . .	ֆինլանդական
43.	13. յտածել . . . . .	մտածել
«	15. մարգեն. . . . .	յարգեն
45.	17. վերած ելու	վերացնելու

---



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ ՈՒ Թ Վ Ի Ն Ն Ե Ր

„Րեկեթ“

Մասնակիցի

Բրոշյարներ՝

- No. 1. Մ. Գորկի. Կեանքի գիմաջ.  
Թարգմ. Ահրիսևան . . . 3 կ.
- ” 2. Մ. Գորկի. Գարնանային Մե-  
ղեղիներ. Թարգմ. Ահրիսևան . . . 3 կ.
- ” 3. Կ. Կառուցիկի. Չարճու թեան տօներ  
և տօներ կուի. Թարգ. Ահրիսևան. . . 3 կ.
- ” 4. Աղզերի Մայիսեան տօնը.  
Թարգմ. Ահրիսևան. . . 3 կ.
- ” 5. Լեռննց. Գարբնեոր. (բանաստ.) 3 կ.
- ” 6. Բ. Ս. Կապիտալ և Աշխատանք.  
Թարգմ. Ահրիսևան. . . 50 կ.
- ” 7. Միլիտարիզմը և բանոր դա-  
սակարգը. Թարգմ. Ահրիսևան. . . 30 կ.

Պոս-կարներ՝

- Nos. 1. 2. Կ. Մարխ, Ա. Նազարեկի.  
” 3. 4. Բ. Չափարեան, Մ. Սարուխանեան.

Գ Ի Ն Ն Է

- Ռուսաստանում . . . . . 30 կ.  
Արտասահմանում . . . . . 60 սանտ.

Ցանկացողները կարող են գիմել՝

Բուրջարիա՝ Ռուսոյի, Խմբ. „Վերածնութիւն“-ի  
Ամերիկա՝ Բոսոն, Խմբ. „Երիտ. Հայաստան“-ի

Русе, печ. „Меркурь“.